Ազգ
Azg
9 ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ՈՒՐԲԱԹ 199(5051)
ISSN: 1829-1651

# Թուրքիան Էրզրում է իջեցրել Երեւան-Հալեպ չվերթի հայկական եւս մեկ ինքնաթիռ

*Չմոռանալով թխվածքաբլիթի բեռնարկղերի մեջ իր 3 հազար ինքնաշիգ ատրճանակները խլացուցիչներով Եմեն ուղարկել*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Երեկ՝ վաղ առավոտյան թուրքական հեռուստատեսությունները ավետեցին, որ Էրզրումի օդանավակայան է իջեցվել Երեւան-Հալեպ չվերթի հայկական եւս մեկ ինքնաթիռ: Նախորդ ինքնաթիռը, որը նույնպես «Օգնիր եղբորդ» նախաձեռնության շրջանակներում Երեւանից Հալեպ մարդասիրական օգնություն էր տանում, իջեցվել էր հոկտեմբերի 15-ին: Հայկական ինքնաթիռում որեւէ զենք չհայտնաբերվեց:

Ինչ վերաբերում է հոկտեմբերի 10-ին թուրքական ռազմաօդային ուժերի հարկադրանքով Անկարայում վայրէջք կատարած Մոսկվա-Դամասկոս չվերթն իրականացնող սիրիական ինքնաթիռին, ապա հակառակ Թուրքիայի վարչապետ Էրդողանի եւ արտգործնախարար Դավութօղլուի՝ «ինքնաթիռում հայտնաբերված զենքի ու զինամթերքի» մասին հայտարարություններին, առ այսօր՛ և զենքը, և՛ զինամթերքը մնում են առեղծված: Միաժամանակ անտեսվում են ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության «հայտնաբերված զենքը ցուցադրելու» պահանջները:

Հոդվածը գրելու պահին հայկական ինքնաթիռը դեռեւս Էրզրումում էր: Պարզապես Թուրքիայի տրանսպորտի, ծովագնացության եւ հաղորդակցության նախարար Յըլդըրըմը հայտարարել էր, թե խուզարկումը շարունակվում է, որպեսզի խաղաղ բնակչության կյանքին սպառնացող որեւէ զենք չմտնի Սիրիա:

Հայտարարության մասին նշելիս, «Դունյա Բուլթենի» կայքէջը ցինիկորեն ընդգծում էր. «Հայկական ինքնաթիռի բեռները մատուցվում են իբրեւ մարդասիրական օգնություն»: Թուրքական լրատվական գործակալության այս ցինիզմը յուրահատուկ է բռնությունը պաշտող, նույնիսկ 21-րդ դարում մարդասպանով հիացող թուրք հրոսակին: Սակայն խնդիրը հրոսակի ցինիզմը չէ, այլ «Գող՝ սիրտը դող» հայկական ասացվածքի ճշմարտացիությունը:

Ինչո՞ւ: Մինչ հարցին պատասխանելը, նշենք, որ ինքնաթիռ իջեցնելու թուրքական արարքը որեւէ առնչություն չունի զենք հայտնաբերելու հավանականության իրականացվող խուզարկման հետ: Առավել եւս չի կարող լինել սիրիացի խաղաղ բնակչության հանդեպ հոգատարության դրսեւորում, քանի որ Թուրքիան ինքն է զինում «Ազատ Սիրիայի բանակի» վարձու մարդասպաններին, զենքի արժեքն, իհարկե, նախապես գանձելով Քաթարից ու Սաուդյան Արաբիայից:

Տես էջ 8

# Նախագահի թեկնածու առաջադրելու փոխարեն քաղաքական օրակարգի փոփոխություն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ճիշտն ասած, մերձնախագահական ընտրություններին մոտիկ ժամանակը կտրուկ շրջադարձ արեց փաստորեն, քանի որ մերձքաղաքական շրջանակները սպասում էին ԲՀԿ, ՀՅԴ, ՀԱԿ դիրքորոշումներին՝ նախագահի թեկնածու առաջադրել-չառաջադրելու մասին, ու լավատեսները սպասում էին միավորում ինչ-որ թեկնածուի շուրջը (ընդդիմության առումով), հոռետեսները, կամ, ավելի շուտ, ինձ նման պրագմատիկները արձանագրում էին, որ այդպիսի միավորում հնարավոր չէ, սակայն հստակեցումն անհրաժեշտ է: Բայց հիմա բոլորը միասին ստանում են մեկ այլ ձեւաչափ՝ քաղաքական խորհրդակցությունների առաջարկի (կարելի է ասել՝ 2 առաջարկի՝ ԲՀԿ-ի եւ ՀՅԴ-ի) տեսքով, ինչն այս պահին փոխում է քաղաքական օրակարգի հունը:

Տես էջ 3




# 18 արտադրողների «Չանախ» պանրում աղիքային ցուպիկներ են հայտնաբերվել

Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ստուգումներ է անցկացրել պանրի արտադրության 59 տնտեսվարողների մոտ, որոնց արդյունքների մասին երեկ, կառավարության նիստի ավարտից հետո լրագրողներին տեղեկացրեց ծառայության պետ **Աբրահամ Բախչագյուլյանը**: Ստուգումների ընթացքում պարզվել է, որ փոքր տնտեսվարողները սննդամթերքի անվտանգության նորմերի պահպանման խնդիրներ ունեն: 18 տնտեսվարողների արտադրած «Չանախ» տեսակի պանրի մեջ էլ հայտնաբերվել են աղիքային ցուպիկներ: Նրանք տուգանվել են ընդհանուր առմամբ 10 մլն 400 հազար դրամով, ինչպես նաեւ դադարեցվել է նրանց արտադրությունը՝ մինչ վերացնեն արտադրության հիգիենայի կանոնների պահպանման եւ մակնշման խախտումները: Աբրահամ Բախչագյուլյանը տեղեկացրեց նաեւ, որ ոչնչացվել է առողջության համար վտանգավոր 5540 կգ պանիր:

Սիբիրախտի դեպքերի առնչությամբ տրված հարցին սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետը պատասխանեց, որ Վարդենիսի տարածաշրջանի 2 գյուղերում հիվանդության օջախները տեղայնացվել են եւ հիվանդ կենդանիները ոչնչացվել: Տավուշի մարզում այս հիվանդության առկայության մասին տրված հարցին էլ նա պատասխանեց, որ կան հիվանդ կենդանիների անկման դեպքեր, բայց հիվանդության համաճարակ այս մարզում չկա: Աբրահամ Բախչագյուլյանը կոչ արեց գյուղական համայնքների բնակիչներին՝ համագործակցել իրենց ծառայության հետ եւ պետական պատվերի շրջանակներում պատվաստել իրենց կենդանիներին այս հիվանդության դեմ:

Ա. Ս.

# Նոր ՀԴՄ-ների տեղադրումը հետաձգվեց մինչեւ 2013-ի հուլիսի 1-ը

Կառավարության երեկ ընդունած որոշմամբ նոր ՀԴՄ-ների տեղադրման վերջնաժամկետը ավելացված արժեքի հարկի դաշտում գործող տնտեսվարողների մոտ 2013-ի հունվարի 1-ի փոխարեն սահմանվեց 2013-ի հուլիսի 1-ը: Այս մասին կառավարության նիստին հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ մանրամասներ հաղորդեց պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ **Վարդան Միրումյանը**: Նա հայտնեց, որ 500 մլն դրամ եւ ավելի շրջանառություն ունեցող տնտեսվարողների մոտ նոր՝ ցանցային հիշողությամբ ՀԴՄ-ների տեղադրումը 2013-ի հունվարի 1-ի փոխարեն 2013-ի հուլիսի 1-ը սահմանելը պայմանավորված է այս գործընթացն առավել սահուն անցկացնելու անհրաժեշտությամբ: Կոմիտեի փոխնախագահը նաեւ տեղեկացրեց, որ ստեղծվել է «ՀԴՄ գրասենյակ» պետական ընկերությունը, որը պետք է զբաղվի վերոնշյալ ՀԴՄ-ների ներդրման եւ սպասարկման հարցերով:

Ա. Ս.

# Սիբիրախտի դեպք նաեւ Արմավիրում

Արմավիրի մարզի Արմավիր համայնքում նույնպես սիբիրախտի դեպք է հայտնաբերվել: Արմավիրում խոշոր եղջերավոր կենդանին սատկել է օրեր առաջ, լաբորատոր հետազոտությունների արդյունքները երեկ բացահայտել են , որ կենդանին վարակված է եղել սիբիրախտով:

Հիշեցնենք, որ սիբիրախտի դեպքեր արձանագրվել են նաեւ Գեղարքունիքի ու Տավուշի մարզերում:

Ի. Պ.

# Alitalia-ն Հայաստանի երկնքում

Ինչպես տեղեկացանք «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից, այսօրվանից Եվրոպայի խոշորագույններից «Ալիտալիա» (Alitalia) ավիաընկերությունը կսկսի թռիչքներ իրականացնել դեպի Հայաստան: Այդ կապակցությամբ օդանավակայանի բիզնես սրահում տեղի կունենա մամուլի ասուլիս, որին կմասնակցեն Հայաստանում Իտալիայի արտակարգ եւ լիազոր դեսպանը, ավիաընկերության եւ օդանավակայանի ղեկավարները:

Ա. Ս.

# Արքայազնի ու սուլթանի մասին

Հ. ԱՓՅԱՆ

Բրիտանական Լորդերի պալատի ներկայացուցիչ բարոնուհի Քերոլայն Քոքսը Լորդերի պալատում հանդես է եկել Ադրբեջանի հասցեին քննադատական ելույթով: Բարոնուհին, ընդգծելով, որ ինքը բազմիցս է եղել Լեռնային Ղարաբաղում եւ՝ «հիմա ձեզ տեղեկություն կհաղորդեմ առաջին ձեռքից», մասնավորաբար անդրադարձել է Ադրբեջանում հայերի հանդեպ վարվող էթնիկ քաղաքականությանը, «Կոլցո» օպերացիային, Սումգայիթում ու այլ ադրբեջանական եւ ոչ միայն ադրբեջանական քաղաքներում ազգությամբ հայերի նկատմամբ իրականացված ջարդերին: Շեշտելով, որ Բաքուն այսօր էլ հայերի հանդեպ թշնամական քաղաքականություն է վարում՝ «դրանով իսկ վնաս հասցնում բանակցությունների խաղաղ ընթացքին», բարոնուհի Քոքսը այդուհանդերձ նկատել է. «Հայաստանի ու Ադրբեջանի ժողովուրդները խաղաղության կարիք ունեն, եւ ոչ ոք նոր ապակայունացնող պատերազմ չի ցանկանում»:

Դժվար է ասել, թե ներկա բրիտանացի լորդերն ինչպես են արձագանքել բարոնուհու՝ «առաջին ձեռքից» մատուցված տեղեկություններին, սակայն եթե նրանցից ոմանք կարդացած լինեին օրերս բրիտանական The Independent հայտնի պարբերականում լրագրող Թոմ Փեքի հեղինակած հոդվածը՝ «Արքայազնը, դաժան բռնապետը եւ բարեկամությունը, որից նա պարզապես չի հրաժարվի» վերտառությամբ, ապա գուցե եւ Լորդերի պալատը հնարավորությունների սահմանում կփորձեր վերանայել Ադրբեջանի հետ բրիտանական քաղաքականությունը, անկախ այն հանգամանքից, որ Ադրբեջանի հետ լրջորեն կապված է բրիտանական արքայական ընտանիքի ներկայացուցիչ, թագուհի Եղիսաբեթի երրորդ զավակն ու երկրորդ որդին, Յորքի դուքս արքայազն Էնդրյուն: Արքայազնի ու Ալիեւների, կոնկրետ՝ դուստր Արզուի միջեւ հարաբերություններին «**Ազգը**» առիթ ունեցել է անդրադառնալու: Իլհամ Ալիեւի կրտսեր դուստրը ապրում է Լոնդոնում եւ բավական լուրջ կապեր ունի բրիտանական որոշ շրջանակների հետ, մասնավորաբար՝ արքայազն Էնդրյուի: Ալիեւների հետ Էնդրյուի կապի մասին Թոմ Փեքն իր վերոհիշյալ հրապարակման մեջ գրում է. «Մասնավոր ինքնաթիռների վրա հարկատուների գումարների շռայլ վատնումները, էլ չենք խոսում աշխարհում կասկածելի առաջնորդների հետ նրա անհաջող բարեկամական հարաբերությունների մասին, պատճառ դարձան, որ Էնդրյուն հեռանա Միացյալ Թագավորության առեւտրի ու ներդրումների հարցերով հատուկ ներկայացուցչի պաշտոնից: Սակայն հիմա էլ դուքսը շարունակում է հետաքրքրություն ցուցաբերել Ադրբեջանի գործերի նկատմամբ, որտեղ նա համարվում է աշխարհի ամենադաժան ու ամենակոռումպացված առաջնորդներից մեկի՝ նախագահ Ալիեւի ընկերը»:



*Յորքի դուքսը Ալիեւի կնոջ եւ Լեյլա աղջկա հետ*

Տես էջ 5

# «Հոգեորսություն» հասկացությանը տալ հստակ իրավական սահմանում

Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել քննարկում «Խղճի եւ կրոնական ազատությունների մասին» օրենքի նախագծի շուրջը՝ մասնակցությամբ Հայ առաքելական եկեղեցու, հասարակական կազմակերպությունների, ներկայացուցիչներ կառավարության աշխատակազմի, կրթության եւ գիտության նախարարության, Հայ ավետարանական ընտանիքի 9 եկեղեցիների եւ այլ կրոնական կազմակերպությունների: Օրենքի նախագծի շուրջը ներկայացվել են դիտողություններ ու առաջարկություններ, որոնք ուսումնասիրելով՝ օմբուդսմենը ներկայացրել է «Խղճի եւ կրոնական ազատությունների մասին» ՀՀ օրենքի նախագծում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու բազմաթիվ առաջարկություններ:




Դրանցից մեկն է՝ «հոգեորսություն» հասկացությանը տալ հստակ իրավական սահմանում: **Կարեն Անդրեասյանն** առաջարկում է պարզաբանել «հոգեբանական բռնություն» հասկացությունը եւ դրա համար պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Պարզաբանման կարիք ունի նաեւ օրենքի նախագծում տեղ գտած «սոցիալական առավելություն» հասկացությունը, որը հաճախ օգտագործվում է անձին որեւէ հավատքի հետեւորդ դարձնելու նպատակով, եւ չպետք է նույնացվի կամ չփոթեցվի բարեգործության հետ:

Կրոնական դաստիարակությունը նույնպես կարեւոր խնդիր է: Թեպետ օրենքի նախագիծը թույլ է տալիս ծնողին իր համոզմունքներից ելնելով կրոնական դաստիարակություն տալ երեխային, միեւնույն ժամանակ չի կարգավորում այն դեպքերը, երբ ծնողներից յուրաքանչյուրը տարբեր կրոնական ուղղությունների հետեւորդ է եւ համաձայնության չեն գալիս երեխայի կրոնական դաստիարակության հարցում:

Խնդրահարույց է նաեւ արտերկրից կրոնական կազմակերպությունների ֆինանսավորումը: Եթե օրենքի նախագիծն արգելում է կրոնական կազմակերպությունների ֆինանսավորումը օտարերկրյա պետություններից, ապա արդյո՞ք Հայաստանում բնակվող որոշ ազգային փոքրամասնությունների եկեղեցիների ֆինանսավորումը նույնպես պետք է կարգավորվի տվյալ նախագծով:

Հ. Հ.

# Գյումրիում ոստիկանությունն ընդդեմ քաղաքը տնակներից ազատմա՞ն

Առաջին հայացքից թվում է, թե Գյումրին վագոն-տնակներից ազատման գործում պիտի շահագրգռված լինեին բոլորը, այդ թվում առաջին հերթին՝ բնակիչները, ապա տեղական ու հանրապետական իշխանությունները:



Սակայն 2010թ.-ից Գյումրիում ընթացող բնակբաշխման գործընթացի մեր դիտարկումները ցույց են տալիս, որ բնակարան ստացած անօթեւան բազմաթիվ ընտանիքներ տնակների քանդման ժամանակ երբեմն հանդիպում են արհեստածին խոչընդոտների եւ, որ ամենացավալին է, դրանց հաղթահարման գործում նրանք մնում են անօգնական վիճակում:

Իսկ աղետի գոտում ՀՀ կառավարության կողմից բնակարանների բաշխումը կանոնակարգող որոշումներով սահմանված կարգի համաձայն, նոր բնակարան ստացած ընտանիքները, որպեսզի կարողանան իրենց նոր բնակարանները սեփականաշնորհել, պետք է քանդեն իրենց տնակները եւ ազատեն տարածքները, ինչպես նաեւ այդ փաստը պիտի հիմնավորվի տեղական իշխանությունների կողմից տրված համապատասխան գրավոր տեղեկանքով: Ավելացնենք, որ յուրաքանչյուր բնակբաշխման գործընթացի ժամանակ Գյումրիում ձեւավորվում են հատուկ շինարարական բրիգադներ, ովքեր բնակարաններ ստացած ընտանիքներից գնում են ժամանակավոր կացարանները, դրանք քանդում եւ վաճառում են որպես շինանյութ: Այդ գործարքները շահավետ են նաեւ բնակարան ստացած ընտանիքներին, ովքեր տնակների վաճառքից ստացած գումարները օգտագործում են բնակարանամուտի ծախսերը հոգալու եւ նոր բնակարանը կահավորելու համար որեւէ անհրաժեշտ գույք գնելու նպատակով:

Տնակները քանդելու գործում երբեմն խոչընդոտում են այն անձինք, ովքեր տարիներ առաջ, գյումրեցու խոսքերով ասած, «շան մսի գնով» ձեռք են բերել քաղաքի երբեմնի հզոր հիմնարկ-ձեռնարկությունները ու երկրաշարժից հետո Գյումրիում նախկին ԽՍՀՄ-ի հանրապետություններից ժամանած եւ վերականգնողական աշխատանքներ իրականացրած շինարարների կողմից թողած հիմնարկությունների գույքն ու բանվորական հանրակացարանները: Այդ տարածքներում տեղադրված վագոն-տնակներում բնակվող անօթեւանները, երբ բնակարաններ են ստանում եւ փորձում են իրենց տնակները քանդել, հայտնվում են այդ տարածքների սեփականատերերը եւ պահանջում են տնակները իրենց հանձնել, պատճառաբանելով, թե իրենք տարածքները գնել են այնտեղ տեղադրված տնակներով հանդերձ: Իհարկե, նման պարագաներում լինում են շատ անօթեւան ընտանիքներ, ովքեր էլի փառք են տալիս Աստծուն, որ իշխանությունները տարածքների եւ տնակների հետ նաեւ իրենց չեն վաճառել...

Բնականաբար ցավալի է, որ Գյումրիում որոշ մարդիկ խափանում եւ քաշքշուկների մեջ են ներքաշում 24 երկար ու ձիգ տարիներ բնակարանամուտի ուրախությանը սպասած ընտանիքներին:

Նման վիճակում է հայտնվել նաեւ «Շիրակ կենտրոնի» այսօրվա տեսանյութի հերոսը, որը 24 տարի խոնավ ու ցուրտ տնակներում բնակվելուց հետո օրերս վերջապես Մուշ-2 թաղամասում իր երկու երեխաների եւ տարեց մոր հետ բնակարան է ստացել եւ փորձել է քանդել իր տնակը, սակայն նրա՝ Արմենուհի Մաթոսյանի կիսաքանդ տնակի վրա Գյումրու ոստիկանության կողմից կալանք է դրվել:

Հ. Գ. Նյութը www.shirakcentre.org վեբ կայքում հրապարակելուց անմիջապես հետո ՀՀ Գյումրու դատախազությունից հայտնեցին, որ արդեն իսկ ուսումնասիրում են արծարծված փաստերը:

*Առավել մանրամասն՝ «Շիրակ կենտրոնի» պատրաստած տեսանյութում:*

http://youtu.be/tph–P9veevk

«ԳՅՈՒԼԱՐԳԵՅԹ»

# Ադրբեջանի փոխվարչապետի օգնականը ձերբակալվել է

**Նոյեմբերի 7-ին ձերբակալվել է Ադրբեջանի փոխվարչապետ Էլչի Էֆենդիեւի օգնական Վագիֆ Հուսեյնովը: Ձերբակալությունը կատարվել է այսպես կոչված «Գյուլարգեյթի» շրջանակներում, ինչին, սակայն, ադրբեջանական մամուլը «ամոթխածորեն» տվել է «Էլշաս Աբդուլլաեւի գործ» անվանումը: Խոսքը գործունեությունը կասեցրած՝ Ադրբեջանի միջազգային համալսարանի նախկին ռեկտոր, ներկայումս Ֆրանսիայում որպես քաղաքական վտարանդի բնակվող Էլշադ Աբդուլլաեւի կողմից համացանցում տարածած սենսացիոն երկու տեսահոլովակի նյութերով հարուցված քրգործի մասին է:**

**Հիշեցնենք, որ առաջին տեսանյութում Միլլի մեջլիսի այժմ արդեն նախկին պատգամավոր Գյուլար Ահմեդովան Էլշադ Աբդուլլաեւից 1 մլն մանաթ կամ դոլար է պահանջում՝ «Ալիեւի կազմած ցուցակը կոտրելու» եւ Աբդուլլաեւին պատգամավոր դարձնելու համար: Երկրորդ տեսանյութում Ահմեդովան հանդես է գալիս որպես «Ռամիզ մուալլիմի մարդ» եւ Աբդուլլաեւին էլ նույն խորհուրդն է տալիս: Խոսքը Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի մասին է, որը տեսանյութը համարել է «սադրանք» ոչ միայն իր, «այլեւ իշխանության նկատմամբ առհասարակ»:**

**Վագիֆ Հուսեյնովը պետական առաջին պաշտոնյան է, որ այդ գործով ձերբակալվել է: Նրան կասկածում են Աբդուլլաեւից 1 մլն մանաթ կաշառք ստանալու մեջ՝ Ադրբեջանի միջազգային համալսարանի գործունեության արտոնագիր «տրամադրելու խոստման դիմաց»: Թե ինչպե՞ս կարող էր փոխվարչապետի օգնականը նման բան խոստանալ համալսարանի ռեկտորին, հարցը, հավանաբար, քննության չի առնվի:**

**Տվյալ դեպքում ավելի հավանական է, որ Հուսեյնովը քրեական պատասխանատվության կենթարկվի, իսկ փոխվարչապետը երեւի «տարիքի» կամ «առողջական վիճակի պատճառով» հրաժարական կներկայացնի: Բանն այն է, որ Ադրբեջանի կառավարությունում կրթության, գիտության, մշակույթի ոլորտները համակարգող՝ փոխվարչապետ Էլչին Էֆենդիեւը ոչ այլ ոք է, քան Ադրբեջանի ժողովրդական գրող Էլչինը: Նա 70 տարեկան կդառնա եկող տարվա մայիսին:**

**Էֆենդիեւը որդին է Ադրբեջանի ժողովրդական գրող Իլյաս Էֆենդիեւի: Մի խոսքով, հեղինակավոր ընտանիքի ներկայացուցիչ է եւ նախին ԽՍՀՄ-ում լայնորեն ճանաչված գրող: Ժամանակին նրա պատմվածքները եւ «Արծաթափայլ ֆուրգոն» վիպակը թարգմանվել են նաեւ հայերեն եւ հրատարակվել Երեւանում: Ըստ երեւույթին, իշխանությունները օր ծերության իրենց ժողովրդական գրողին բանտ չեն ուղարկի, բայց, ինչպես ռուսներն են ասում, «ոզնու համար էլ պարզ է», որ առանց փոխվարչապետի գիտության նրա օգնականը համալսարանի ռեկտորից 1 մլն մանաթ կաշառք չէր ստանա:**

**Նույն տրամաբանությամբ՝ այդ չափի գումարի մասին չէր կարող տեղյակ չլինել վարչապետ Արթուր Ռասիզադեն: Իսկ եթե նկատի ունենանք, որ Ադրբեջանի սահմանադրությամբ ողջ «գործադիր իշխանությունը պատկանում է նախագահին», եւ նա ուղղակիորեն է գլխավորում կառավարության գործունեությունը, ուրեմն կոռուպցիոն բուրգի գագաթին պետք է տեսնել Իլհամ Ալիեւին:**

**Կլինեն մի քանի պաշտոնանկություններ եւ շնորհազրկումներ, այդ ամենը կներկայացվի իբրեւ «անհաշտ պայքար կոռուպցիոն երեւույթների դեմ»: Չէ՞ որ սկսվում է նախագահական ընտրությունների տարին: Եվ Իլհամ Ալիեւին պետք են Էլչին Էֆենդիեւի կամ Ռամիզ Մեհթիեւի կարգի «պառաված նոխազներ», որոնց կարելի է «անարյուն զոհաբերել»: Գուցե թե՝ նաեւ Արթուր Ռասիզադեին, որ արդեն 70-ն անց է, ինչպես եւ՝ Ռամիզ Մեհթիեւը:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Հայ գրողների ստեղծագործությունները թուրքական եթերում

Ստամբուլի հայկական «Ակօս» շաբաթաթերթի անձնակազմը նոյեմբերի 10-ից թուրքական Açk Radyo-ի (Աչըք ռադիոյի) եթերում ամեն շաբաթ օր հանդես կգա նոր հաղորդմամբ:

News.am-ից տեղեկանում ենք, որ Açk Radyo-ի եթերում «Ակօս»-ի ներկայացրած նախագիծը կկոչվի «Ռադիո Ակօս», որի ընթացքում Թուրքիայի եւ աշխարհի տարբեր իրադարձությունների վերաբերյալ կտրամադրվեն տեղեկություններ եւ հարցազրույցներ:

Açk Radyo-ն նոյեմբերի 1-ից եթեր է մտցրել հետաքրքրական մի այլ նախագիծ նույնպես: Նախագիծը կոչվում է «Հայ գրականության նմուշներ», այս հաղորդման ընթացքում ընթերցվում են 1912 թվականին Սարգիս Սրենցի կազմած եւ վերջերս վերահրատարակված «Հայ գրականության նմուշներ» կոչվող գրքում տեղ գտած ստեղծագործությունները եւ ընդհանրապես հայ գրողների ստեղծագործությունները թուրքերեն թարգմանությամբ:

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# ՀՅԴ-ն էլ, ԲՀԿ-ի պես, քաղաքական քննարկումներ է առաջարկում, բայց իր օրակարգի շուրջը

ՀՅԴ գերագույն մարմնի անդամներ **Արմեն Ռուստամյանն** ու **Աղվան Վարդանյանը** երեկ ներկայացրին ԳՄ այն հայտարարությունը, որն ըստ սպասումների պետք է լիներ նախագահական ընտրություններին ընդառաջ ՀՅԴ դիրքորոշումը: Սակայն հայտարարությունն ավելի շատ մարտավարական փաստաթուղթ էր հիշեցնում ընդհանրապես ՀՅԴ սկզբունքների մասին: Հայտարարության մուտքն այսպիսին էր. «2013 թ. փետրվարին կայանալիք ՀՀ նախագահի ընտրությունը մեր անկախ պետականության անցած ճանապարհը վերաիմաստավորելու, երկրի ու հասարակության խնդիրները ճիշտ ձեւակերպելու, ժողովրդի բարեկեցությունն ապահովող գործողություններ նախանշելու, արտաքին մարտահրավերները արժանապատվորեն դիմակայելու բացառիկ հնարավորություն է: Ակնհայտ է, որ միայն մրցակցային, բովանդակությամբ ազատ, արդար, նոր որակի ընտրությունների դեպքում կվերականգնվի հասարակության վստահությունը, կբարելավվի բարոյահոգեբանական մթնոլորտը, երկիրը բնականոն, անվտանգ եւ թռիչքաձեւ զարգացման հեռանկար կունենա»: Ապա եւ նշված էին մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման դեպքում միայն «կարող ենք դուրս գալ տեւական տեղապտույտից»: Դրանց մեջ են ժողովրդի ազատ կամքով իշխանության ձեւավորումն առանց ընտրակաշառքի եւ դա երաշխավորող ընտրահամակարգով 100 տոկոս խորհրդարանական համակարգի անցումը, մինչեւ 2015 թվականը այս անցման համար սահմանադրական փոփոխությունների նախաձեռնումը, օրենքով երաշխավորված գործուն լծակների տրամադրումը ընդդիմությանը (մասնավորապես քաղծառության խորհրդում, տնտեսական մրցակցության պաշտպանության եւ հանրային ծառայությունը կարգավորող հանձնաժողովներում, ՎՊ-ում ստեղծվելիք հակակոռուպցիոն գործակալության ղեկավարման առումով):



ՖՈՏՈԼՈՒՐ

ՀՅԴ-ն առաջարկում է տարանջատել բիզնեսն ու քաղաքականությունը, դատական իշխանությանն օժտել իրական անկախությամբ, արմատապես փոխել տնտեսական քաղաքականությունը (սոցիալական ուղղվածությամբ), արտաքին քաղաքականության գերխնդիր դարձնել անկախության, անվտանգության եւ ինքնուրույնության ապահովման ուղղվածությունը, Հայաստանի եւ Արցախի միջեւ կնքել ռազմաքաղաքական դաշինք, բանակցություններում ապահովել ԼՂՀ կարգավիճակի ու անվտանգության առաջնահերթությունը, հետ կանչել Հայաստանի ստորագրությունը հայ-թուրքական արձանագրություններից: Ընտրվելիք նախագահի՝ ՀՅԴ մատնանշած մարտահրավերները գիտակցելու, ստանձնելու եւ դրանք լուծելու հանձնառությունն ստանձնելուց է կախված ընտրվելիք նախագահի՝ հաջորդ հինգ տարիներին կառավարելու արդյունավետությունը: Եվ այս պատճառով ՀՅԴ-ն նախաձեռնում է քաղաքական քննարկումներ այլ կուսակցությունների եւ հասարակության շերտերի հետ, որոնց ընթացքում էլ կհստակեցնի իր մասնակցության ձեւն ու տարբերակը նախագահական ընտրություններին:

Այս հայտարարությունը ավելի դետալացնելու լրագրողների փորձերը հայտնի դարձրին, որ ՀՅԴ-ն նախագահական ընտրություններին միասնական թեկնածու առաջ քաշելու հարց չունի, անձերի խնդիր չէ, այլ երկրի ճակատագրի, համենայն դեպս այդպես էր ասում ՀՅԴ ԳՄ անդամ Արմեն Ռուստամյանը: Չթերագնահատելով առաջադրվելիք հավանական թեկնածուներին՝ պահի լրջությունն է ուղղակի կարեւորում՝ հասկանալու, թե ժողովուրդն ո՞ւմ է ուզում նախագահ ունենալ: Շատ կարեւոր է հասկանալ այն բանը, թե ընտրություններից հետո ի՞նչ որակի պետություն է լինելու: Երեւի կգտնվի մեկը, որ կգա, պատմական խնդիրը կլուծի եւ հրաժարական կտա, իսկ ընդհանրապես նախագահ դարձող մարդը չի կարող ՀՅԴ-ի առաջարկած օրակարգի հետ հաշվի չնստել:

Լրագրողները հստակեցրին՝ առաջարկների հետեւում արդյո՞ք Ռոբերտ Քոչարյանն է, ՀՅԴ ԳՄ անդամ Աղվան Վարդանյանը հակադարձեց, թե դատարկ զբաղմունք կամ մոտեցում է Դաշնակցության կեցվածքը Քոչարյանի անձով պայմանավորելը, քանի որ այն երբեք պայմանավորված չի եղել, ՀՅԴ-ն միշտ իր սկզբունքներով է շարժվում եւ Հայաստանում ամենաինքնուրույն ուժն է. «Մենք եղել ենք թե՛ իշխանության, թե՛ ընդդիմության մեջ, բայց միշտ մեր սկզբունքները պահել ենք: Ռոբերտ Քոչարյանը եղել է մեր երկրի նախագահը, եւ շատ հարցերում մենք նման ենք մտածել, բայց շատ հարցերում՝ էլ տարբեր: ՀՅԴ-ի կեցվածքը որեւէ կերպ պայմանավորել Քոչարյանի անձով սխալ է, դատարկ զբաղմունք, ՀՅԴ-ն առաջնորդվում է իր մոտեցումներով»: Իսկ Ա. Ռուստամյանն էլ նկատեց, որ եթե Քոչարյանը ժամանակին համաձայներ ՀՅԴ մոտեցումներին, ապա կունենայինք խորհրդարանական կառավարման համակարգ, հարյուրտոկոսանոց համամասնական ընտրակարգ:

ԲՀԿ-ի հայտարարության առթիվ, թե քաղաքական խորհրդատվություններ են սկսում 100 տոկոս համամասնական կարգին անցնելու եւ ընդհանրապես խորհրդարանական կառավարման անցնելու վերաբերյալ, Արմեն Ռուստամյանն ասաց, թե գոհունակությամբ են լսում, որ ՀՅԴ փաթեթի այս կամ այն կետը այլ կուսակցություններ եւս ընդունում են, սակայն այդ փաթեթի մեկ-երկու կետ իրականացնելով հնարավոր չէ դուրս գալ այն տեղապտույտից, որի մեջ երկիրն է հայտնվել: Սակայն շաբաթ օրը ԲՀԿ-ն եւ ՀՅԴ-ն հանդիպելու են եւ խնդիրը կքննարկեն: Դեկտեմբերի 2-ին ՀՅԴ-ն կամփոփի այս հայտարարությամբ սկսած քննարկումների շարքը գերագույն ժողով գումարելով, որի ընթացքում արդեն որոշիչ հայտարարությունը կընդունվի, որով նաեւ հավանաբար հայտնի կդառնա, թե ո՞ւմ է պաշտպանելու ՀՅԴ-ն նախագահական ընտրություններին կամ գուցե սեփական թեկնածու է առաջադրում:

Մ. Խ.

# Լոռվա երիտասարդները հանդիպեցին Կարեն Կարապետյանին

ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանի աջակցությամբ վերջերս ստեղծվել է «Լոռու երիտասարդ սերունդ» հասարակական կազմակերպությունը, որի հիմնական նպատակն է համապատասխան ատյաններում բարձրացնել մարզի երիտասարդության առջեւ ծառացած խնդիրները, տարաբնույթ նախաձեռնությունների միջոցով հնարավորությունների սահմաններում նպաստել այդ խնդիրների աստիճանական կարգավորմանը, երիտասարդության կրթության, ինքնադրսեւորման, կատարելագործման, ինչպես նաեւ հանգստի ու ժամանցի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, երիտասարդների ներուժի ակտիվացմանը:

Ստեղծվել է ՀԿ 40 հոգուց խորհուրդ, որում ընդգրկված են մարզի բոլոր տարածաշրջանները ներկայացնող ուսանողներ, երիտասարդ մտավորականներ, մասնագետներ:

Երեկ տեղի ունեցավ խորհրդի անդամների հանդիպումը Կարեն Կարապետյանի հետ: Երիտասարդները պատգամավորին ներկայացրին իրենց առաջարկներն ու տեսլականը նշյալ խնդիրների կարգավորման վերաբերյալ: Ավելի քան երկու ժամ տեւած հանդիպման ժամանակ քննարկվեցին տարաբնույթ խնդիրներ, որոնք առկա են մարզում՝ կապված ոչ միայն երիտասարդներին առնչվող հարցերի, այլեւ ընդհանրապես այլ ոլորտների հետ:

Կարեն Կարապետյանը մեկ անգամ եւս շեշտեց, որ մեր երկրի ամենամեծ ներուժը մարդկայինն է, ուստի շատ կարեւոր է մարդկային, առավել եւս՝ երիտասարդական ներուժի պահպանումը, զարգացումն ու ակտիվացումը: Պատգամավորը պատրաստակամություն հայտնեց հնարավորինս աջակցել «Լոռու երիտասարդ սերունդ» հասարակական կազմակերպությանը իրենց առջեւ դրված խնդիրների լուծման ճանապարհին՝ կոչ անելով լինել առավել նախաձեռնողական եւ ակտիվ, ցուցաբերել առավելագույնս քաղաքացիականություն ու պատասխանատվություն:

Կարեն Կարապետյանի խոսքերով՝ առկա խնդիրները հնարավոր է հաղթահարել հասարակական կառույցների, օրենսդիր մարմնի ներկայացուցիչների եւ գործադիր մարմինների ակտիվ եւ արդյունավետ համագործակցության միջոցով:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

# Նախագահի թեկնածու առաջադրելու փոխարեն քաղաքական օրակարգի փոփոխություն

*1-ին էջից*

Իրավիճակը նման է խորհրդարանական ընտրություններին նախորդող ժամանակին, երբ մարդիկ սպասում էին ընդդիմության համախմբմանը ընդդեմ իշխանական ուժերի, բայց ստացան «Զորսի» ձեւաչափ, որը դարձավ ժամավաճառության վայր՝ հնարավորություն տալով ինչպես իշխանական ուժերին լավագույնս դրսեւորվելու ընտրություններում, այնպես էլ ԲՀԿ-ին՝ համարյա միայնակ ընդդիմադիր ձայներին տիրապետելու:

Այնպես որ զարմանալի չէ, որ որոշ շրջանակներ ԲՀԿ-ի՝ ՀՅԴ երեկվա հայտարարությունից մեկ օր առաջ տեղի ունեցած հայտարարությունը համարում են մարդկանց ուշադրությունը շեղելու մի նոր նախաձեռնություն՝ մոտեցող նախագահական ընտրություններից առաջ: Եւ հաջորդող ՀՅԴ նախաձեռնությունը նույնպես ժամանակային առումով զարմացնում է, չնայած արդար լինենք ու նշենք, որ ՀՅԴ հայտարարածը նրա մշտական օրակարգն է եղել արդեն տարիներ ու բովանդակային առումով մի երկու կետով է մոտ ԲՀԿ նախաձեռնությանը: Արդեն տեսակետներ եղել են որոշ շրջանակներից, ովքեր կասկածում են դրանց նույն աղբյուրից ծագելու մասին: Չնայած՝ ՀՅԴ-ականները երեկ դատարկ զբաղմունք համարեցին ՀՅԴ-ն Քոչարյանի հետ կապելը: Համենայնդեպս Է. Շարմազանովի՝ նախորդ օրվա հայտարարության շատ թափանցիկ ակնարկները ԲՀԿ նախաձեռնության առումով այդպես մտածելու տեղիք տալիս է: Շարմազանովի աննախադեպ, նրա սովորական ոճին անհամապատասխան տոնը խոսում է այն մասին, որ ինչ-որ բան, այնուամենայնիվ, դուրս է եկել վերահսկողությունից. «Հետագա զարգացումներն իրականում քաղաքական ուժերի եւ հոսանքների համար շատ ավելի նման կլինեն դիմակազերծման մի գործընթացի. հիմա արդեն ավելի ակնառու կլինի քաղաքական դաշտի բոլոր խաղացողների իրական դեմքը՝ հետեւելով այս հարցի շուրջը նրանց քայլերին». եւ «խորհրդարանական կարգի անցման առաջարկով հանկարծահաս հանդես եկողների հետեւում չտեսնել մարդկանց, որոնք այլ կերպ, սեփական դեմքով, առանց շղարշվելու, իշխանության գալու հնարավորություն չունեն, առնվազն քաղաքական կարճատեսություն՝ պարզունակ քայլ է եւ ակնհայտ՝ որտեղ մշակված»՝ կարծես թե ակնհայտորեն վերաբերում է Ռ. Քոչարյանին:

Բա ո՞վ է, ուրեմն, քաղաքական կարճատեսը, ո՞վ է շղարշվողը, որտե՞ղ է մշակված այս նոր սցենարը, ի վերջո:

Սակայն նշենք, որ ՀՀԿ փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբյանը եւ այլ հանրապետականներ չեն ժխտել, որ ԲՀԿ-ի հետ, այո, ՀՀԿ-ն բանակցել է 100 տոկոս համամասնական ընտրակարգին անցնելու, սահմանադրական փոփոխությունների միջոցով վարչապետի լիազորություններն ավելացնելու առաջարկների, Սերժ Սարգսյանի թեկնածությունը պաշտպանելու շուրջ: Սակայն ՀՀԿ փոխնախագահը նաեւ նշել էր, որ դրա համար ժամանակ չկա, բացի այդ՝ կիսապատերազմական վիճակում ենք, մեզ այս պահին նախագահական կարգն ավելի է ձեռք տալիս:

Դե իսկ Շարմազանովի տեսակետը դեռ ՀՀԿ նախագահի տեսակետը չէ, սկսված գործընթացներին նախագահ Սարգսյանի արձագանքի սպասումն օդում է, ինչպես, ի դեպ՝ Ռ. Քոչարյանի արձագանքի, քանի որ Շարմազանովն ակնհայտորեն ակնարկում էր Ռ. Քոչարյանին: Ու թե ինչ խնդիր է լուծում ԲՀԿ-ն՝ դեռ պարզ չէ, բայց, իսկապես, եւս մի քանի օր, եւ ամեն ինչ պարզ կլինի:

Ամբողջ խնդիրն այն է, որ այն, ինչ հիմա է ասվում, նույն հաջողությամբ կարող է ասվել նախագահական ընտրություններից անմիջապես հետո, եւ քաղաքական խորհրդակցություններն էլ այնժամ կարելի է անել՝ առաջարկների իրագործման ժամանակացույցը եթե նկատի ունենանք: Մանավանդ, որ այս բոլորը ՀՅԴ-ն եւ «Ժառանգությունը» վաղուց են ասել: Տեսեք՝ ԲՀԿ-ի հայտարարությունը ՀՅԴ ԳՄ անդամ Աղվան Վարդանյանը դրական համարեց, քանի որ ԲՀԿ-ն առաջին անգամ հրապարակավ ընդունում եւ խոսում է կառավարման համակարգը փոխելու անհրաժեշտության մասին, չնայած... վստահ չէր, որ դա տակտիկական նպատակ չի հետապնդում: Այսու՝ ՀՅԴ-ն ու ԲՀԿ-ն շաբաթ օրը կհանդիպեն՝ այս մասին խոսելու: «Ժառանգության» հետ էլ ԲՀԿ-ն քննարկումներ ունենալու է:

Սակայն այժմ, երբ պետք է նախագահի թեկնածու առաջադրել, տպավորություն է, թե քաղաքական ուժերը խոսքը գցում են կտուրը, ու մեկը մյուսի հետ ոչ մի կապ չունի: Թե՝ ունի՞: Եվ ԲՀԿ-ն այս անգամ չի մասնակցելու նախագահական ընտրություններին, կամ միգուցե, իսկապես, սեփական թեկնածուով է հանդես գալու, եւ ասվածը նրա նախընտրական պլատֆորմի մաս է: Ո՞վ է այդ թեկնածուն՝ եթե նա արտահայտվի, գուցե հստակություն մտնի հարցում, թե չէ՝ ով ասես, ինչ ասես ենթադրեց. կարճաժամկետ տակտիկական մոտեցում, ժամանակ շահելու պես բան, ու թե բան է՝ չհաջողի, կասեն՝ մեկ մարդու նախաձեռնություն էր: Ասում էին, չէ՞, Օսկանյանի ասածներին:

Բոլոր դեպքերում ՀՀԿ-ն եւս քննարկելու է ԲՀԿ առաջարկը, համենայնդեպս այդպես էր ասում Գալուստ Սահակյանը, չնայած որ այս ամբողջ շարժընթացը, ըստ նրա, չի ազդում ՀՀԿ-ի վրա: Եւ ՀՅԴ առաջարկն է քննարկելու՝ թող հիմնավորումները մի լավ բերեն, թե ինչու է պետք անցնել խորհրդարանական համակարգին, հանգիստ նշում է ՀՀԿ փոխնախագահը:

**Հ. Գ. - Ամենահետաքրքրականը երեկ ավելի ուշ ՀԱԿ-ի տարածած հայտարարությունն էր, որից ստացված տպավորությունը հայտնի ֆիլմի հայտնի տեսարանն է. «Ես եմ վկան, իսկ ի՞նչ է եղել որ...»: Քննարկելով ԲՀԿ-ի առաջարկը քաղաքական համատեղ խորհրդակցություններ անցկացնելու մասին՝ ՀԱԿ-ը նախ առաջարկում է ընդլայնել դրանց օրակարգը՝ ներառելով ընտրական համակարգի վերափոխման իր՝ ՀԱԿ-ի փաթեթի ընդունումը եւ նախագահական ընտրությունների օրինականության վերահսկման համատեղ մեխանիզմի ստեղծումը, ինչպես նաեւ իշխանությանն անվստահություն հայտնելու խորհրդարանական մեխանիզմների կիրառման քայլեր, զանգվածային միջոցառումների անցկացում, կոռուպցիայի եւ մենաշնորհների վերացման համատեղ ծրագրի ստեղծումը ներառելով:**

# Ի՞նչ արժե հայերի եւ հրեաների միջեւ ատելություն սերմանելը

***Այս վերլուծականը գրելու առիթը Ադրբեջանում հայատյացության մի նոր դրսեւորումն է, որի մասին նոյեմբերի 3-ին «Ազգ»-ում ահազանգ հնչեցրին Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի նախագահ, ԱՄՆ Պաշտպանական ազգային համալսարանի հրավիրված առաջատար պրոֆեսոր, գեներալ-մայոր Հայկ Քոթանջյանը եւ ԳԱԱ մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի մարդու գենետիկայի խմբի գիտական ղեկավար, Հայկական մարդաբանական ընկերության նախագահ, պրոֆեսոր Լեւոն Եպիսկոպոսյանը: Խոսքը այն կեղծիքի վրա հիմնված քարոզչական նոր արշավի մասին է, ըստ որի ադրբեջանական Ղուբա քաղաքի մոտ հայտնաբերված զանգվածային թաղումներն իբր կատարվել են հայերի կողմից հրեաների զանգվածային ոչնչացման արդյունքում: Ընդ որում իրենց իսկ ստեղծած կեղծիքը արդեն ճշմարտություն համարելով, Ադրբեջանում պատրաստվում են հուշարձան կանգնեցնել «հայերի կողմից իրականացված ցեղասպանության զոհերի հիշատակին»:***

***Ստորեւ փորձենք հասկանալ՝ ի՞նչ է կատարվում, եւ իրականում ի՞նչ նպատակով են այդքան ջանքեր թափվում հայերի նկատմամբ աշխարհի հրեաների ատելությունը բորբոքելու համար:***

## Ատելության քարոզչամեքենայի նոր արտադրանքը

Բոլորս ենք հիշում, թե ինչպես էր Ադրբեջանը, հակառակ առողջ բանականությանը եւ տարրական արդարամտությանը, ցանկանում ամեն գնով հետ բերել Լեռնային Ղարաբաղը, չխորշելով իսլամական աշխարհում Հայաստանի եւ հայերի նկատմամբ ատելություն սերմանելուց: Հիշում ենք նաեւ, թե ինչպես իսլամական երկրների շարքում Ադրբեջանը գտավ գործընկերներ, որոնք, առանց խորանալու խնդրի բովանդակության մեջ, առանց լսելու հայկական կողմի փաստարկները եւ բացատրությունները, շտապեցին Հայաստանը ագրեսոր ճանաչել եւ ՄԱԿ-ում քվեարկեցին ադրբեջանական բանաձեւի օգտին: Սակայն հետո, երբ Ադրբեջանը ցանկանում էր այս գործընթացը պարբերական եւ նույնիսկ անընդհատ դարձնել, իսլամական աշխարհում հնչեցին ձայներ, ըստ որի այդ թեմային անդրադարձ արդեն եղել է, ուստի նույնը անընդհատ կրկնելու անհրաժեշտություն չկա: Հնչեցին նաեւ տեսակետներ, որ Իսլամական համերաշխության կազմակերպությունը, վերջին հաշվով, համերաշխության կազմակերպություն է, եւ շատ ավելի օգտակար ու արդյունավետ կլիներ փորձել կամուրջներ գցել ադրբեջանցիների եւ հայերի միջեւ՝ փոխադարձ վստահության հիմքեր ստեղծելու եւ երկխոսություն սկսելու համար:

Սակայն Ադրբեջանը, իսլամական եւ մասնավորապես արաբական աշխարհում հայատյացություն բորբոքելու ռեսուրսը այս փուլում սպառված համարելով, սկսեց մի նոր արշավ, այս անգամ հայերի դեմ փորձելով տրամադրել Իսրայելի եւ աշխարհի հրեաներին: Խնդիրն այն է, որ 2007 թ. ադրբեջանական Ղուբա քաղաքի մոտ հայտնաբերված զանգվածային թաղումները, սկզբում հայտարարելով մահմեդականների հանդեպ զանգվածային բռնության արդյունք, այնուհետեւ մտափոխվեցին եւ մտածեցին, որ ավելի լավ է հայտարարել հայերի կողմից ոչնչացված հրեաների զանգվածային թաղում: Թխվեց նաեւ մի ամբողջ պատմություն այն մասին, թե դա արել է 1918 թ. այդ ամիսներին Բաքվում իշխող Խորհրդի զինված ջոկատներից մեկը Համազասպի գլխավորությամբ: Այս լեգենդի հեղինակներին բացարձակապես չի հուզել այն, որ տարբեր երկրների, մասնավորապես Թուրքիայի գիտական շրջանակներին հայտնի են ճիշտ հակառակը վկայող փաստեր: Օրինակ՝ այն մասին, որ Ադրբեջանի եւ մասնավորապես Բաքվի հայերի նկատմամբ զանգվածային բռնություններ են իրականացվել վերոհիշյալ Բաքվի Խորհրդի տապալումից հետո այնտեղ հասած թուրքական զորքերի կողմից: Այնպիսի վայրագություններ, որոնք նույնիսկ շատ բան տեսած գերմանական սպաներին ստիպեցին բողոքել եւ հեռանալ այդ թուրքական զորախմբերի կազմից: Այս մասին փաստերը բծախնդրորեն հավաքել է գեներալ Հայկ Քոթանջյանը եւ դրել վերոհիշյալ հայտարարության աղբյուրագիտական հիմքում: Ադրբեջանում ոչ որ երբեք չի խոսել այն գազանությունների մասին, որոնց սահմռկեցուցիչ վկայությունները սկսեցին երեւալ, օրինակ, խորհրդահայ գրականության մեջ այդ դեպքերից քառասուն տարի հետո, հենց որ հնարավոր եղավ այդ մասին խոսել: Ադրբեջանում երբեք չեն էլ ակնարկել որեւէ կերպ 1920 թ. մարտին Շուշիում եւ շրջակայքում կոտորված մոտ 20000 հայերի մասին, չնայած դրա փաստական վկայություններն էլ անսպառ են: Ոչ էլ իրենց նեղություն են տվել արտասահմանից, էլ չենք ասում Հայաստանից, մասնագետ մարդաբանների ներգրավվելու համար, ովքեր կարող էին գիտական համակողմանի հիմնավորված գնահատական տալ Ղուբայում հայտնաբերված զանգվածային թաղումների զոհերի մասին: Այս ամենը նրանց պետք չէր: Բայց Ադրբեջանում հույժ անհրաժեշտ էր հակակշիռներ ստեղծել, օրինակ, Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ուրացումը դատապարտող նոր օրինագծի նախագիծը շրջանառության մեջ դնելը թույլ չտալու համար, եւ ահա Ադրբեջան հրավիրվեց Ֆրանսիայի հրեական համայնքի պատվիրակություն, որին Ղուբայի զանգվածային թաղումը մատուցվեց իբրեւ հայկական գազանությունների արդյունք: Պարզ է, որ ամեն մեկը, լսելով նման սարսափելի իրողությունների մասին, պետք է ցավ ու ցնցում ապրեր: Սա հասկանալի եւ բացատրելի է: Հասկանալի եւ բացատրելի չէ, թե ինչպե՞ս է այդ ամենը կապվում հայերի հետ: Ադրբեջանում քիչ ջանքեր չեն գործադրել, որ Իսրայելի քաղաքական եւ հասարակական շրջանակներում սկսի քննարկվել այս կեղծիքի առաջացրած ծանր տպավորությունը: Մի «զարմանալի» զուգադիպությամբ այդ ակտիվությունը համընկավ թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացման եւ Իսրայելի խորհրդարանում Հայոց ցեղասպանությունը դատապարտող նոր օրինագծի շրջանառման հետ:

## Թուրք-ադրբեջանական համերաշխությունը հայերի դեմ

Վերջերս Երեւան ժամանած թուրք քաղաքագետներից մեկն իր դասախոսության մեջ վկայեց, թե Թուրքիայի առջեւ կանգնած կարեւոր խնդիրներից մեկը 2015 թ. նշվելիք Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին ընդառաջ սպասվող միջազգային ճանաչումների նոր ալիքին դիմագրավելն է: Խնդիրը Թուրքիայի եւ Ադրբեջանի համար բարդանում է նրանով, որ աշխարհի հասարակական կարծիքում վերջին տասնամյակների ընթացքում հսկայական տեղաշարժեր են եղել հօգուտ Հայոց ցեղասպանության անժխտելի փաստի միջազգային ճանաչման եւ դատապարտման: Հետեւաբար այս գործընթացի բացահայտ եւ թաքնված հակառակորդները պետք է գործադրեն աննախադեպ ջանքեր հարցադրումների սրությունը թուլացնելու եւ միջազգային հանրային կարծիքը խճճելու ու շեղելու համար: Այս ճանապարհին մի գործողություն արդեն փորձարկվել է: Օրինակ՝ Արցախյան պատերազմի տարիներին Խոջալուի մոտ պատահած ողբերգությունը հայերի վրա բարդելը եւ նույնպես ցեղասպանություն ճանաչելը: Ոչինչ, որ այդ անհիմն պնդումներն իսպառ հերքող լուրջ ու ծանրակշիռ փաստարկներ հայ քաղաքական գործիչներն ու դիվանագետները պատրաստել ու ներկայացրել են միջազգային ու քաղաքական համարյա բոլոր կարեւորագույն հարթակներում: Այդ բանավեճերից ու քարոզչական փոխհրաձգություններից հետո վերոհիշյալ հարթակներում հարցը սպառված է համարվել առանց Ադրբեջանի համար սպասված արդյունքներ ունենալու: Բայց դա չի խանգարել Ադրբեջանին, օրինակ, միայն Թուրքիայում 2011 թ. ընթացքում 52 համալսարաններում եւ 62 վիլայեթներում զանգվածային միջոցառումներ անցկացնել, որոնց տասնյակհազարավոր մասնակիցների ներշնչվել է թուրքերի նկատմամբ հայերի կողմից իբր կատարված գազանությունների կեղծ վարկածը: Ես դժվարանում եմ ասել, թե այդ զանգվածային միջոցառումների մասնակիցներից քանիսն է հետո, օրինակ, համացանցերում փնտրել մեր հերքումներն ու բացատրություններն այդ հարցին: Կարող եմ միայն փաստել, որ թուրք քաղաքագետներն ու լրագրողները վկայում են, որ այդ քարոզչության տպավորությունն այնքան ծանր է, որ Թուրքիայի իշխանությունները իբր մոտակա տարիներին, համենայն դեպս մինչեւ 2015 թ., չեն էլ պատրաստվում մեռյալ կետից շարժել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրը: Սա՝ մեղմ ասած: Իսկ փաստորեն ստացվում է, որ գոյություն ունի ադրբեջանա-թուրքական մի համերաշխ համագործակցություն, որի նպատակն է առանց միջոցներ խնայելու խլացնել եւ լռեցնել հայերի պահանջը Օսմանյան կայսրությունում կատարված Հայոց ցեղասպանությունը վերջնականապես ճանաչելու եւ դատապարտելու ուղղությամբ:

## Ատելության տեխնոլոգիաների գործադրումից սպասվող օգուտը

Մոտ երեք տարի առաջ միջազգային կազմակերպություններից մեկը հրապարակեց Թուրքիայում իրականացված հասարակական կարծիքի մի հարցման արդյունքը, ըստ որի թուրքերի կողմից ամենաչսիրված երեք ժողովուրդներն են հայերը, հրեաները եւ ամերիկացիները: Այս հարցումը հաջորդեց «ֆուտբոլային դիվանագիտության» ծավալմանը եւ ցույց տվեց, որ դարավոր կասկածանքն ու անվստահությունը հայերի նկատմամբ ինչպես կար, այնպես էլ մնում է արդիական, իսկ հրեաների նկատմամբ վերաբերմունքը սրվել է Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ հարաբերությունների վատթարացման հետեւանքով: Ընդհանրապես Թուրքիայի ազգայնական շրջանակներում խիստ դժգոհ են Եվրոպական միության հետ իրենց երկրի ընթացող բանակցությունների տեմպից եւ ասում են, որ Թուրքիային չեն ուզում Եվրոպական միություն ներս թողնել, որովհետեւ մահմեդական երկիր է, իսկ Եվրոպական միությունը մի «հրեա-քրիստոնեական ակումբ է»: Եվ ահա հրեաների եւ քրիստոնեության միջեւ մերձեցում թույլ չտալու համար խնդիր է դրվել հրեաների շրջանում, օրինակ, հայերի նկատմամբ ատելություն բորբոքել, հույս փայփայելով, որ դա կարող է մի հակառակ դժգոհության եւ ատելության բռնկում առաջացնել հայերի մեջ: Հիշո՞ւմ եք դեռ հարյուր տարի առաջ Արեւելքի շուկաներում շրջանառված այն ասույթը, թե որտեղ հայ կա, այնտեղ հրեան անելիք չունի: Կամ ընդհակառակը: Բոլոր ժամանակների կայսրություններում այս տարանջատող եւ փոխադարձ կասկածանք սերմանող ասույթից ով ասես, ինչ օգուտ ասես կարողացել է քաղել: Եվ ահա եկել է այն մի հերթական անգամ խաղարկելու ժամանակը, երբ առանց լուրջ ապացույցների, առանց կեղծիքից ամաչելու, հրեաների ցեղասպանության մեջ պետք է մեղադրել հայերին:

1999 թ. ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը հրապարակել է Ռուսաստանի պետական արխիվներում իր տարիների պրպտումների արդյունքները, ըստ որոնց բազմաթիվ նյութեր կան, թե ինչպես 20-րդ դարասկզբին ցարիզմի ճնշումներին ի պատասխան կայսրության տարբեր մասերում ամբողջ հրեական համայնքներ ցանկացել են ընդունել քրիստոնեություն հայկական ծեսով, այդպիսով փորձելով դիմագրավել արհավիրքին եւ պահպանել իրենց ինքնությունը: Այս տեղեկությունները գեներալ Քոթանջյանը եւ նրա գործընկերները նույնպես աչքաթող չեն արել: 20-րդ դարի քանի-քանի նշանավոր մարդկանց մասին գիտե մեզանից յուրաքանչյուրը, որոնց ծնողներից մեկը հայ է եղել, մյուսը՝ հրեա: Այդպիսի մարդկանց, ովքեր վառ արտահայտված կրկնակի ազգային ինքնագիտակցություն ունեն, ես քիչ չեմ հանդիպել թե՛ Ռուսաստանում, թե՛ ԱՄՆ-ում, թե՛ Եվրոպայում:

Հայաստանի եւ հայերի նկատմամբ ատելություն բորբոքելու ադրբեջանա-թուրքական այս նոր գործողության նպատակներից մեկն էլ խափանելն է հայկական եւ հրեական լոբբիստական կազմակերպությունների համագործակցության փորձերը, եւ ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, այլեւ մեր տարածաշրջանում Հայաստանի եւ Իսրայելի միջեւ հնարավոր երկխոսության եւ համագործակցության հարցերում: Գեներալ Քոթանջյանը, օրինակ, նշում է, որ «հայատյացության քաղաքականությունը, որը հայ ժողովրդի նկատմամբ բացահայտ կերպով որդեգրել է ադրբեջանական պետության ղեկավարը՝ զուգակցելով համաշխարհային հայությանը հրապարակայնորեն Ադրբեջանի թշնամի հայտարարելով, չխորշելով ժողովուրդների, այդ թվում՝ հայերի եւ հրեաների միջեւ հարաբերությունների իրական պատմության նենգափոխումից, փորձում է միջազգային հանրությանը ներքաշել քաղաքական ձեռնածությունների ուղեծիր»:

Ի՞նչ անել այս նոր սպառնալիքի դեմ: Պարզ է, որ մենք աշխարհասփյուռ մեր հայ եւ այլազգի, այդ թվում՝ հրեա եղբայրների միջոցով պետք է հայթայթենք եւ համակարգենք այնպիսի նյութական ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ է համարժեքորեն գործադրել հայասյացության քաղաքականությանը հակափաստարկելու եւ դիմագրավելու համար: Այսինքն՝ այս նոր սպառնալիքն էլ պետք է ընդունել իբրեւ ասիմետրիկ եւ հակադարձ գործողությունները կազմակերպել, ոտքի հանելով աշխարհում մեր բարեկամներին եւ ուղղակի ազնիվ մարդկանց: Անհնար է թույլ տալ, որ գլոբալ տեղեկատվական հոսքերի եւ ազատ խոսքի տարածման մեր դարում այսպիսի կոպիտ ու նենգ մեթոդներով թշնամանք եւ ատելություն բորբոքվի մեր ժողովրդի նկատմամբ: Սա ընդամենը նշանակում է, որ Ադրբեջանը գնում է ոչ թե խաղաղության ու հաշտության փնտրտուքի եւ երկխոսության հաստատման ճանապարհով, այլ Հայաստանի եւ հայերի նկատմամբ ատելությունը փորձում է դարձնել հարատեւ եւ դրանով դաստիարակել իր երկրի աճող սերունդներին: Եթե Ադրբեջանում կարծում են, որ ատելության մեքենայի հերթական գործադրմամբ մեր մեջքը կոտրվելու է, նշանակում է՝ նրանք վատ են ճանաչել հայերին: Բայց եթե մի օր այնտեղ հաղթահարելու են առողջ բանականությունն ու բանակցելու եւ երկխոսելու ցանկությունը, պետք է առանց թուլանալու ու հյուծվելու պատրաստ լինել նաեւ այդ իրողությանը: Ատելությունը վատ խորհրդատու է, իսկ ստի ոտքերը կարճ են:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Փոքրամասնությունը «դադար» է վերցնում, մինչ Սաակաշվիլու մերձավորներին «չեզոքացնում են»

Վրաստանի ներկայիս նախագահ Միխեիլ Սաակաշվիլու գլխավորած կուսակցության պատգամավորները, որ հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում փոքրամասնություն են խորհրդարանում, նախօրեին լքել են օրենսդիր մարմինը:

Վրացական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ փոքրամասնության ղեկավար **Դավիթ Բակրաձեն** հայտարարել է, որ իրենց կուսակցության խորհրդարանական ներկայացուցիչները գնում են այդ քայլին որպես արձագանք երկրում իրականացվող ձերբակալությունների, ինչպես նաեւ տեղական կառավարման մարմինների վրա գործադրվող ճնշման: Կատարվողը Բակրաձեն մեկնաբանել է որպես խորհրդարանական մեծամասնություն ձեւավորած «Վրացական երազանքի» կողմից համագործակցության պատրաստ չլինելու վկայություն:

«Երբ իշխանությունները փորձում են իրենց ձեռքը վերցնել բանակը (ձերբակալվել են մի շարք բարձրաստիճան սպաներ), հեռուստատեսությունը (հարկային ստուգումներ են իրականացվում Սաակաշվիլու կողմնակից համարվող Հանրային հեռուստատեսությունում, որը, միջազգային կազմակերպությունների համաձայն, ամենաօբյեկտիվն է Վրաստանում), մենք հնարավոր չենք համարում երկխոսությունը խորհրդարանի ներսում ու ժամանակավորապես դադարեցնում ենք մեր գործունեությունն այդ պատերի ներսում», հայտարարել է Բակրաձեն, հետդարձի տեղ թողնելով խոսքերով, թե հետագա իրադարձություններից է կախված իրենց վերադարձը:

Իսկ որ Վրաստանում ձերբակալությունները հաջորդում են միմյանց, արդեն ոչ թե զարմանքի կամ տարակուսանքի տեղիք է տալիս, այլ որոշակի համոզվածություն է ձեւավորում, որ ներկայիս իշխանությունները նախկինների հանդեպ գնում են հաշվեհարդարի: Այդ առնչությամբ «մտահոգություն» է հայտնել նաեւ խորհրդարանական ընտրություններով իշխանության եկած Իվանիշվիլու համար 1 թիրախ Միխեիլ Սաակաշվիլին:

Մոռանալով, որ ժամանակին ինքն էլ հաշվեհարդարային մոտեցում էր դրսեւորում իր նախկինների հանդեպ, թերեւս խնայելով միայն «աղվես» Շեւարդնաձեին, Սաակաշվիլին նոր կառավարությանը եւ խորհրդարանին կոչ է արել «բարձր կանգնել անձնական շահերից ու ավելի վեր դասել պետական շահերը», քանի որ ձեւավորված հակադրությունը կարող է «վատթարացնել վիճակը երկրում ու վնասել Վրաստանի հեղինակությանն արտերկրում»:

Ամեն դեպքում, Իվանիշվիլին միայն բանակ կամ մամուլը չի «մաքրում» սաակաշվիլամետներից: Արդեն իսկ պաշտոնը թողնելու պահանջ է ներկայացվել ԱՄՆ-ում Վրաստանի դեսպանին, ընդ որում՝ հենց քաղաքական նկատառումներից ելնելով: Ըստ նորանշանակ ԱԳ նախարար Մայա Պանջիկիձեի երեկվա հայտարարության, Միացյալ Նահանգներում Վրաստանի դեսպանը «լիովին կիսում է Սաակաշվիլու «Միացյալ ազգային շարժման» դիրքորոշումները», ուստի համատեղ աշխատանքը ցանկալի չէ: Վրացի դիվանագետ-դեսպանին արդեն իսկ հրաժարականի առումով նախորդել են ՄԱԿ-ում Վրաստանի ներկայացուցիչը, փոխարտգործնախարարը եւ ոչ միայն...

Իսկ Սաակաշվիլու մերձակա շրջապատի ներկայացուցիչներին որոշումներ կայացնելու հնարավորությունից հեռացնող ներկայիս վարչապետ, միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին, որքան էլ հետաքրքրական է, պատրաստվում է այցելել Միացյալ Նահանգներ:

Վ.ՊՈՂՈՍՅԱՆ

# Արքայազնի ու սուլթանի մասին

*1-ին էջից*

Ուշագրավ է, որ Իլհամ Ալիեւը, փաստորեն, սկսեց դժգոհություն հայտնել Ադրբեջանում British petrolium-ի գործունեությունից, երբ Բրիտանիայում առեւտրի ու ներդրումների հարցով հատուկ ներկայացուցիչն այլեւս իր ընկերը՝ դուքս Էնդրյուն չէր: Սակայն պաշտոնաթողությունից հետո դուքսը հանդիպում է կազմակերպում Ադրբեջանում բրիտանացի դեսպան Փիթեր Բեթմանի հետ: Վերջինս էլ, անցյալ շաբաթ, հայրենիքում գտնվելով, ինքն է Էնդրյուի հետ նոր հանդիպման նախաձեռնողը լինում: Ակնհայտ է, որ հանդիպման նպատակն այն էր, որ դեսպանն իրեն մշտապես տեղյակ պահի Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձություններին, չնայած Ալիեւ ընտանիքի հետ մտերմական կապի համար Էնդրյուն օգտվում է նաեւ «արքայադուստր» Արզուի «ծառայություններից»: Դեսպանի ու դուքսի հանդիպման մանրամասնություններն իհարկե հայտնի չեն, միայն Լորդերի պալատի խոսնակը The Independent-ին հայտնել է, որ «չնայած արքայազն Էնդրյուն այլեւս բրիտանական բիզնեսում պաշտոնական դերակատարում չունի, սակայն բնական է, որ նա հետաքրքրված է բրիտանական բիզնեսով»: Մյուս կողմից, արդյոք միայն բիզնեսի՞ հարցեր են քննարկվել արքայազնի ու դեսպանի հանդիպումների ընթացքում: Այս կապակցությամբ Ադրբեջանում Amnesty International-ի գիտաշխատող Նատալյա Նոզադձեն հեգնանքով նկատել է. «Մեզ մնում է միայն հուսալ, որ արքայազնը դեսպանի հետ մասնավոր հանդիպումներում անդրադառնում է նաեւ Ադրբեջանում մարդու իրավունքների ոտնահարմանը, ոստիկանության կողմից բիրտ ուժի գործածմանը, լրագրողների ու բլոգերների հանդեպ սահմանված գրաքննությանը, որոնց ծեծում են պարզապես՝ կառավարությանը քննադատելու համար»:

Ստիպված ենք «հուսախաբ» անել հարգարժան տիկին Նոզադձեին, քանի որ արքայազնը, որ պաշտոնավարման հինգ ամիսների ընթացքում ութ անգամ այցելել է նախագահ Ալիեւին, ընդ որում, այդ հանդիպումներից 6-ը «եղել է բրիտանական կառավարության անունից», հետեւաբար մյուս երկուսը՝ մասնավոր, հազիվ թե հետաքրքրված լինի Ադրբեջանում հիշյալ խնդիրներով: Ավելին, 2011-ին Ադրբեջանում Բրիտանիայի նախկին դեսպանը պաշտոնական նամակ է հղում կառավարության երեք գերատեսչություններին՝ պահանջելով՝ «զրկել արքայազն Էնդրյուին Ադրբեջանում իր ստանձնած դերակատարումից» այսինքն՝ դուքսի ստանձնած դերակատարումը հակասում էր բրիտանական պետության շահերին: Ադրբեջանական որոշ լրատվական աղբյուրներից տեղեկանում ենք, որ արքայազն Էնդրյուն հարեւան երկրում ունի պարզապես իր բիզնես շահերը, օրինակ՝ նա հետաքրքրված է Կասպից ծովի ափին գոլֆի հսկայական հանգստավայրով, սակայն այս տեղեկությունները պալատը հերքում է: Միեւնույն ժամանակ Բրիտանիայի ԱԳՆ խոսնակը այս առումով նշել է. «Արքայազն Էնդրյուն չի կորցրել իր հետաքրքրությունները այն երկրում, որի նկատմամբ առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերել առեւտրի հարցով դեսպան լինելու ժամանակ», այս տեղեկությունից էլ եւ առհասարակ եզրակացնելով՝ կարելի է նկատել, որ արքայազն Էնդրյուն այսօր էլ, պաշտոնաթողությունից հետո, շարունակում է ոչ պաշտոնական դերակատարում ունենալ երկու երկրների միջեւ առեւտրի զարգացման գործում»: Եվ ինչն է ուշագրավ, Ալիեւի հետ ընկերության պատճառով Էնդրյուն արժանանում է նաեւ «բրիտանական քննադատությանը»: Այլ հարց է, սակայն, թե որքանո՞վ ազդեցություն ունեն Էնդրյուի «առանձնահատուկ հետաքրքրությունները» բրիտանական քաղաքականության մշակման ու իրագործման մեջ:

# Հունաստանը հաստատեց խնայողությունների նոր փաթեթ

Հունաստանի խորհրդարանը հաստատել է բյուջեի խնայողության միջոցառումների նոր փաթեթ, որով նախատեսվում է ծախսերը կրճատել 18,5 մլրդ եվրոյով, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը: Օրինագծի օգտին քվեարկել են 299 պատգամավորներից 153-ը:

Պատգամավորների հաստատած ծրագիրը պետք է ուժի մեջ մտնի մինչեւ 2016 թվականը: Ի թիվս այլ բաների, այն ենթադրում է կենսաթոշակային տարիքը հասցնել 67-ի, վերացնել մի շարք սոցիալական արտոնություններ եւ իջեցնել պետական հատվածի նվազագույն աշխատավարձերը: Խնայողության միջոցառումների նմանօրինակ փաթեթի ընդունումը կարեւոր պայման է, որը միջազգային վարկատուները Հունաստանին առաջադրել են 31,5 մլրդ եվրո կազմող հերթական ֆինանսական օգնության հատկացման համար:

Խնայողության միջոցառումների փաթեթի քննարկումը եւ քվեարկությունը խորհրդարանում տեղի է ունեցել բողոքի բազմամարդ ձեռնարկումների պայմաններում, որոնք անցկացվեցին Աթենքում եւ Հունաստանի այլ քաղաքներում: Մայրաքաղաքում բողոքի ցույցին մասնակցում էր առնվազն 70 հազար մարդ: Ցույցը վերաճեց ոստիկանության եւ ցուցարարների բախումների: Ցուցարարները փորձեցին ներխուժել խորհրդարանի շենք եւ հրկիզախառնուրդով լի շշեր նետեցին ոստիկանների վրա: Վերջիններս ի պատասխան կիրառեցին արցունքաբեր գազ եւ այլ հատուկ միջոցներ: Առնվազն 20 ցուցարար ձերբակալվեց:

ՊԵԿԻՆ

# Բացվեց ՉԿԿ 18-րդ համագումարը

## *ՉԺՀ նոր ղեկավարի անունը հայտնի է*



Երեկ Պեկինում բացվել է Չինաստանի Կոմկուսի 18-րդ համագումարը, որը երկրի քաղաքական աշնան գլխավոր իրադարձությունն է: Համագումարում պաշտոնապես կհայտարարվի, որ ներկայիս նախագահ Հու Ցզինտաոյի իրավահաջորդը նրա տեղակալ Սի Ցզինպինն է: Երկրի ղեկավարությունում տեղի է ունենում սերնդափոխություն, որի հետ ժողովուրդը մեծ հույսեր է կապում, նշում է ՌԻԱ գործակալությունը:

Չինաստանում խնդիրները շատ են. անբավարար համակարգվածություն, զարգացման անհաշվեկշռվածություն եւ անհետեւողականություն, համակարգային խոչընդոտներ, զարգացած եւ հետամնաց տարածաշրջանների մեծ տարբերություններ, հարուստների եւ աղքատների եկամուտների միջեւ գոյացած անդունդ, տեղերում անբավարար կոշտ կուսակցական աշխատանք, կաշառակերություն:

Դեռ նախօրեին համագումարի մամլո քարտուղարը հայտարարել էր, որ սպասվող քաղաքական բարեփոխումը չի ենթադրում կուսակցության դերի նվազեցում: Դրա վկայություններից մեկը համագումարի մասնակիցների կազմն է: Երկրի նահանգներն ու վարչական շրջանները ներկայացնում են ավելի քան երկու հազար պատվիրակներ: ՉԿԿ-ի ամբողջ պատմության մեջ առաջին անգամ համագումարին մասնակցում են այսպես կոչված «գյուղական գրանցմամբ բանվորները»: Դահլիճում նրանք ընդամենը 26 հոգի են, բայց իրենց թիկունքին ունեն 250 միլիոն գաղթյալ բանվորներ:

Դեն Սյաոպինի սկսած բարեփոխումների շնորհիվ Չինաստանն անճանաչելիորեն փոխվել է: Բայց երկիրը պատրա՞ստ է արդյոք խորացնելու դրանք եւ որքա՞ն հեռու կարող է գնալ: Համագումարը պետք է պատասխան տա այս հարցերին: Սակայն հիմա արդեն ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է ոչ միայն պետության առաջին դեմքերի փոփոխմանը, այլեւ ամբողջ Չինաստանում սպասվող մեծ փոփոխություններին:

# ԵԱՀԿ-ն ԱՄՆ-ի ընտրությունների թերությունների մասին




ԵԱՀԿ ժողովրդավարական կառույցների եւ մարդու իրավունքների բյուրոն ընդունել է, որ ԱՄՆ-ում նոյեմբերի 6-ին անցկացված նախագահական ընտրությունները թեեւ պրոֆեսիոնալ էին, բայց՝ ոչ անթերի: Այդ մասին ասվում է եվրոպական կազմակերպության կայքէջում տեղադրված մամլո տեղեկագրում:

Ամերիկյան ընտրություններում բյուրոյի ներկայացուցչության ղեկավար Դաան Էվերտսը նշում է, որ ԱՄՆ-ի իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ընտրական օրենսդրության եւ արարողակարգերի առանձին թերությունները վերացնելու նպատակով: Մասնավորապես Ալաբամայում, Ֆլորիդայում, Այովայում, Միչիգանում, Միսիսիպիում, Օհայոյում, Փենսիլվանիայում եւ Տեխասում եվրոպացի դիտորդներին առհասարակ չէին թույլատրել մուտք գործել ընտրական տեղամասեր: Ալյասկայում եւ Թեննեսիում դիտորդներին ենթարկել էին այնպիսի սահմանափակումների, որ նրանք հրաժարվեցին աշխատել այդ նահանգներում:

ԱՄՆ-ում ընտրության իրավունք ունեցող 237 մլն անձանցից մոտ 50 մլն-ը չկարողացավ մասնակցել քվեարկությանը, քանի որ գրանցված չէր: Միեւնույն ժամանակ որոշ ընտրողների անուններ ցուցակների մեջ մտցվել են 2 անգամ: ԵԱՀԿ ներկայացուցիչների մտահոգությունը հարուցում են նաեւ ընտրողների նույնականացման կանոնները, որոնք երբեմն ենթարկվում են քաղաքական շահարկումների: Մի շարք նահանգներում չեն կարողացել քվեարկել այն անձինք, որոնք կրել էին իրենց ազատազրկման պատիժները, թեեւ ընտրություններին նման անձանց մասնակցությունը միջազգային նորմա է:

Ընտրական պրոցեսը կանոնակարգող նահանգային օրենքները տարասեռ են եւ բարդ: Ըստ որում, որոշ նահանգներում օրենսդրության մեջ փոփոխություններ են կատարվել քվեարկության օրվանից ընդամենը մի քանի շաբաթ առաջ: Նախընտրական արշավի ծախսերը բնավ սահմանափակված չեն եւ անբավարար թափանցիկ են, հիշեցրել է Էվերտսը, իսկ 2012-ի ընտրությունները ամենաթանկը դարձան ԱՄՆ-ի պատմության մեջ: Եվ վերջապես, թերություններ կան քվեների հաշվառման տարածաշրջանային կանոնների մեջ:

ԱԶԳ

# Մշակույթ



Նապոլեոնը «անկարելի» բառը վերցուցած էր ֆրանսական բառարաններէն, քանի միայն կը հաւատար կարելիին, իսկ մենք հայերս կ՚ըսենք «Անկարելի բան չկայ, ամէն ինչ կարելի է»...

Ահա այսպէս «Գոհար» համոյթի Հարաւային Ամերիկայի հայաշատ գաղութներ այցելելն ու համերգներու շարքով ելոյթ ունենալը կարելիութիւն մը դարձաւ:

Հոկտեմբեր 23-ը եւ 24-ը Մոնթեվիդէոյի մէջ հանդիսացան մեր մշակոյթային կեանքի պատմական օրերը:

Առաջին համերգին ներկայ գտնուեցան Ուրուգուայի պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ եւ անոնց գլխին՝ երկրի

## «Գոհար» համոյթը Մոնթեվիդէոյէն անցաւ...



նախագահ Խոսէ Մուխիքա եւ առաջին տիկին Լուսիա Թոփոլանսքի:

Ուրիշ բան է տեսահոլովակով դիտել «Գոհարի» համերգները, բոլորովին տարբեր՝ անոր կենդանի ներկայացումը: Այնպիսի մթնոլորտ մը ստեղծուեցաւ համերգասրահին մէջ, որ հանդիսատես-կատարողներ կապը այնքան անմիջական էր, որ վայրկեանի մը համար կարծեցինք, թէ մենք ալ բեմին վրայ էինք:

Ոչինչ պակսեցաւ, լուսաւորութիւն, ձայնային հնչողութիւն, երգ, պար, նուագ, ամբողջական համադրութեամբ անմոռանալի դարձուցին զոյգ համերգները: Փոքր ազգ ենք, սակայն հզօր ենք մեր մշակոյթով հասկացողութիւնը «Գոհարի» միջոցաւ դրսեւորուեցաւ այդ երկու օրերու ընթացքին:

«Գոհարը» մեր ցանկալի Կիլիկիան սրահ փոխադրեց՝ կիլիկեցիներուս սիրտերը երկինք հասցնելով, կարծես թէ մեր թագաւորները մեզի հետ ըլլային իրենց դրօշներով:

Այս բոլորին մղիչ ուժը, ոգեւորողն ու կեանք տուողը, կախուած էր մէկ մարդու ճպոտէն՝ մաէստրօ Սեպուհ Աբգարեանէն, որ իր գործունէութեամբ, պարտադրող կեցուածքով, ուրիշ տեսակ շունչ մը տուաւ համերգներուն:

Ինչպէս շնորհակալութեան խօսքեր չարտասանել այս հսկայ խումբի մեկենաս եւ տիպար հային՝ Յարութ Խաչատուրեանին եւ իր ընտանիքին, որոնք ազնուագոյն գաղափարը յղացան նման երեւոյթ մը յանձնելու հայութեան, իսկ Կիպրոսի «ՀԱՅԱՍԱ» արտադրող հաստատութեան տղաքը գերազանցեցին բոլոր չափանիշները, փաստը տալով, որ իրենց ստանձնած գործը կատարեցին ամէնայն կազմակերպուածութեամբ:

Վերնագրի խօսքը հոս փոխադրելով եզրակացնենք՝ «Գոհարը» անցաւ Մոնթեվիդէոյէն, հմայեց, լիցքաւորեց, հպարտացուց մեզ եւ ՄԵԾ հետք մը ձգելով հեռացաւ:

ԿԱՐՕ ՀԷՔԻՄԵԱՆ
Կոմիտաս Ռադիոժամ
Մոնթեվիդէօ-Ուրուգուայ

## Հայ տպագիր գիրքի 500-ամեակին նուիրուած դասախօսութիւն եւ ցուցահանդէս Նիւ Եորքի մէջ

Ամբողջ տարին, հայրենիքէն մինչեւ ամենէն խուլ անկիւնները հայ Սփիւռքին, նշուեցաւ հայ տպագրութեան հինգերորդ հարիւրամեակը, մանաւանդ որ իր կարգին ԻՒՆԵՍՔՕ-ն Երեւանը ընտրած էր որպէս «Գիրքի մայրաքաղաք»: Եւ այս հանդիսութիւններէն կարելի չէր, որ Թէքէեան մշակութային միութիւնը անմասն մնար, միութիւն՝ որ իր գոյութեան առաջին օրէն՝ 1947-էն ի վեր հաւատացած է տպագիր գիրքին ու մամուլին ունեցած ուժին ու կարեւորութեան:

Այս երկրորդ նմանօրինակ հանդիսութիւնն է որ կը կազմակերպէ ԹՄՄ Մեծն. Նիւ Եորքի մասնաճիւղը. առաջինը տեղի ունեցաւ այս տարուան յունուարի 24-ին Նիւ Եորքի առաջնորդանիստ Ս. Վարդան Մայր եկեղեցւոյ սրահին մէջ, ուր հրաւիրուած էր խօսելու Ստանպուլէն Զաքարիա Միլտանօղլուն:

Դասախօսութիւնը տեղի ունեցաւ մշակոյթի ամսուան առթիւ՝ հոկտեմբեր 7-ին, Թենըֆլայի Ս. Թովմաս եկեղեցւոյ սրահին մէջ: Վարչութեան կողմէ հանդէսը բացաւ եւ օրուան հիւրը ներկայացուց տիկին Շողիկ Չալեանը:

Պրոֆ. Գէորգ Պարտաքճեան եղած է դասախօս Պոստոնի Հարվըրդ համալսարանէն ներս (1974-1987) եւ ապա անցած Միշիկընի համալսարան, ուր մինչեւ օրս կը դասաւանդէ հայերէն լեզու եւ գրականութիւն: Ունի հրատարակուած բազմաթիւ գործեր՝ «Հիտլէր եւ Հայկական ցեղասպանութիւնը», որ նոր լոյս կը սփռէ Հայ դատին, ինչպէս նաեւ՝ գրական առաջնորդող հատոր նուիրուած արդի հայ գրականութեան: Ան յատկապէս այս առթիւ եկած էր Դիթրոյթէն:

Ան լայնօրէն անդրադարձաւ միջազգային տպագրութեան ծնունդին եւ շեշտաւորեց իր խօսքը մասնաւորաբար հայ տիպ ու տառին վրայ, որոնց նախաձեռնութեան նուիրուեցան Յակոբ Մեղապարտն ու Ոսկան Երեւանցին, Յովհաննէս Ջուղայեցին ու Խաչատուր Կեսարացին: Տուաւ անունները այն կեդրոններուն, ուրկէ լոյս տեսան առաջին հրատարակուած գիրքերը, բոլորն ալ հեռու Հայաստանէն, իրարմէ անկապ գաղութներու եւ համայնքներու մէջ: Սակայն քսաներորդ դարուն ան իր լայն զարգացումը ունեցաւ նախ Կ. Պոլսոյ ու Թիֆլիսի մէջ եւ ապա՝ Կահիրէ, Պէյրութ ու Պոստոն: Անշուշտ Հայաստանի խորհրդայնացումէն ետք, միլիոնաւոր հայերէն լեզուով գիրքեր լոյս տեսան Երեւանի մէջ, նշանաւորելով զայն հայ տպագրութեան նոր ոսկեդարը: Պրոֆեսորը անդրադարձաւ նաեւ դասական եւ աբեղեանական ուղղագրութիւններու հարցին:

Յետ դասախօսութեան, ներկաները առիթ ունեցան վայելելու հնագէտ Գրիգոր Մարգարեանի հաւաքածոյէն ընտիր նմոյշներ: Բացի հնատիպ գիրքերէն ան ցուցադրած էր նաեւ եկեղեցական սպասներ, տարազներ, աջեր ... հազուագիւտ եւ թանգարանային արժէք ներկայացնող գիրքեր, մատեաններ եւ իրեր: Գրիգոր Մարգարեանի ցուցասրահը կը գտնուի Նիւ Եորքի մէջ: Ան չորս տասնամեակներէ ի վեր նուիրուած է այս հաւաքածոն ի մի բերելու: Յաճախակի անոր ճամբորդութիւնները դէպի Թուրքիա, դէպի Պատմական Հայաստան եւ զանազան եւրոպական մեծ ոստաններ առիթ տուած են բերելու այս բոլորը մէկ հաւաքածոյի մը մէջ. անոնք մեր մշակութային արժէքներն են անկասկած: Պարոն Մարգարեան տուաւ բացատրութիւններ ցուցադրուող առարկաներուն մասին: Ըսենք, որ ան անդամ է ԹՄՄ Նիւ Եորքի վարչութեան:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Եորք

### ԼՈՒՐԵՐ

## Լորին Մաազելը եւ նրա նվագախումբը Հայաստանում

«Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնը ներկայացնում է երբեւէ տեղի ունեցած ամենամեծ իրադարձությունը հայկական երաժշտարվեստում՝ Royal Concertgebouw Orchestra (Թագավորական Կոնցերտգեբաու նվագախումբը 120 հոգանոց կազմով) Նիդերլանդներից՝ լեգենդար դիրիժոր Լորին Մաազելի գլխավորությամբ: 1888 թ. հիմնված նվագախումբը կրում է աշխարհի «թիվ մեկ» տիտղոսը ըստ «Դոյչե Գրամոֆոնի»:

Նվագախումբը ելույթ կունենա այսօր, նոյեմբերի 9-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում, ժամը 19:30-ին:

## Վարպետության դաս Ա. Փելեշյանից

Երեկ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում տեղի ունեցավ մեծ կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանի վարպետության դասը: Դահլիճը լի էր ուսանողներով, դերասաններով, արվեստասեր հասարակությամբ եւ նույնիսկ կանգնելու տեղ չկար: Ա. Փելեշյանն իր «Սկիզբ» եւ «Մենք» ֆիլմերով ապացուցեց, որ առանց տեքստի էլ կինոն կարող է դառնալ գեղարվեստական բարձրագույն արժեք: Քանակապես շատ չեն Արտավազդ Փելեշյանի նկարահանած ֆիլմերը, սակայն դրանցից «Սկիզբ», «Մենք», «Տարվա եղանակները», «Բնակիչները» որպես դասագիրք տարիներ շարունակ տարբեր երկրներում ուսուցանում են ապագա ռեժիսորներին:

Հանդիպման մանրամասները կներկայացնենք «**Ազգի**» վաղվա համարում:

## «Այստեղ» ֆիլմը Ֆլորիդայի միջազգային կինոփառատոնում




Լոդերդեյլի միջազգային կինոփառատոնի շրջանակներում հոկտեմբերի 25-ին Ֆլորիդայի «Պարադիզո» կինոթատրոնում առաջին անգամ ցուցադրվել է ռեժիսոր Բրեյդն Կինգի «Այստեղ» ֆիլմը:

Ըստ ստացված տեղեկագրության, Ֆլորիդայի հայերի հաղորդակցությունների տնօրեն Արսինե Գալուստյան-Ռոզենթալը իր բացման խոսքում ներկայացրել է հայկական մշակույթը եւ ընդհանրապես Ֆլորիդայի հայկական համայնքը նշելով, որ Սբ Դավիթը առաջին հայկական եկեղեցին է այդ տարածքում, որտեղ ապրում են մոտ 30 հազար հայեր: Այնուհետեւ ճանաչված երաժիշտ Ջո Զեյթունյանը ուդի վրա հայկական մեղեդիներ է նվագել եւ պատասխանել ներկաների ուդի վերաբերյալ հարցերին, նշելով, որ դա հին հայկական՝ անատոլիական երաժշտական գործիք է, որի ակունքները գնում են մինչեւ 7-րդ դար:

«Այստեղ» ֆիլմը նկարահանված է Հայաստանում եւ հանդիսատեսի առջեւ բացում է բնության գրավիչ եւ տպավորիչ տեսարաններ: Հիմնական թեման հոգեկանի որոնումն է: Ֆիլմում տրամաբանական զարգացում են ապրում հայրենիքից արտագաղթած լուսանկարչուհի Կատարինե Նաջարյանի (դերը կատարում է Լուբնա Ազաբալը) եւ արբանյակային քարտեզագիր-ինժեներ Ուիլ Շեփըրդի (դերասան՝ Բեն Ֆորեստ) հարաբերությունները, որոնք միասին սկսում են իրենց գործունեության «ճանապարհը», առանց կոնկրետ իմանալու, թե ուր է առաջնորդելու այն իրենց, ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնական կյանքում:

Այն հարցին, թե ինչու հատկապես Հայաստանն է ընտրել որպես նկարահանման վայր, ռեժիսոր Կինգը պատասխանել է. «Ինչքան խորացա նյութի մեջ, հասկացա, որ Հայաստանը՝ նրա պատմությունը, բնությունը, աշխարհագրական դիրքը եւ մշակույթը, ինձ համար «համահեղինակ» է դառնում եւ երբ առաջին անգամ 2004-ին այցելեցի Հայաստան, անմիջապես զգացի, որ միայն այդ երկրի դիտանկյունից կարող եմ ճշգրիտ ներկայացնել իմ ֆիլմի պատմությունը: Ուրիշ ոչ մի վայր հարմար չէր կարող լինել»:

Հ. Ծ.

## Հայ մասնակցի ռադիոպիեսը լավագույնների շարքում է միջազգային մրցույթում

Սեդա Ստեփանյանի «Իսկ արեւը շարունակում էր լկտիաբար շողալ» ռադիոպիեսը Բրիտանական խորհրդի եւ BBC-ի համաշխարհային ծառայության Ռադիոպիեսների միջազգային 23-րդ մրցույթում ընդգրկվել է լավագույն 7 աշխատանքների ցանկում:

BBC-ի համաշխարհային ծառայությունն այս տարի ստացել էր 1000-ից ավելի ռադիոպիեսներ աշխարհի տարբեր անկյուններից: Ամենամյա մրցույթում հաղթող են ճանաչվում երկու հեղինակ երկու անվանակարգում՝ անգլերենը որպես մայրենիով գրված ռադիոպիես եւ անգլերենը որպես օտար լեզվով գրված ռադիոպիես: Հաղթողները մեկնում են Միացյալ Թագավորություն, արժանանում դրամական պարգեւի եւ հետեւում իրենց պիեսի բեմադրմանն ու հեռարձակմանը BBC-ի համաշխարհային ծառայությամբ:

«Այս տարի հատուկ այս մրցույթի համար գրել եմ «Իսկ արեւը շարունակում էր լկտիաբար շողալ» ռադիոպիեսը, որը հիմնված է մեծամասամբ իրական դեպքերի վրա եւ կյանքի ու սիրո մասին է Ղարաբաղյան պատերազմի ընթացքում: Պիեսը առանձնանում է այն բանով, որ ներկայացնում է հայկական սովորույթներն ու կյանքը փոքրիկ սահմանամերձ գյուղում»,-ասաց **Սեդա Ստեփանյանը**:

Սեդան ավարտել է Երեւանի Բրյուսովի անվան պետական համալսարանը, այժմ պրակտիկա է անցնում Ազատություն ռադիոկայանում: Իսկ դեկտեմբերին Երեւանի պետական կամերային թատրոնում Գոռ Մարգարյանը կբեմադրի նրա հեղինակած «Ստրիպտիզ» պիեսը: Ասում է, որ Բրիտանական խորհրդի եւ BBC-ի համաշխարհային ծառայության Ռադիոպիեսների միջազգային մրցույթի համար գրված պիեսը նվիրել է իր համար թանկ մարդու, ում այլեւս երբեք չի հանդիպի:

«Գրելիս, ես տողատակերում մեծ սեր ու զգացմունքներ եմ ներարկել եւ հուսամ, այդ ամենը շատ ու շատ մարդկանց սրտեր կջերմացնի եւ խորհելու ու իրենց կյանքը վերանայելու առիթ կտա»,- ասաց Սեդան:

BBC-ի համաշխարհային ծառայության Ռադիոպիեսների միջազգային մրցույթի վերջնական արդյունքները հայտնի կլինեն տարեվերջին:

# Մարզական

## Սամվել Գրիգորյանն արժանացավ արծաթե մեդալի

Իսրայելում ընթացող ծանրամարտի համաշխարհային ուսանողական 3-րդ առաջնության հերթական օրը հաջող էր Հայաստանի պատվիրակների համար: Մինչեւ 77 կգ քաշային ծանրորդների մրցավեճում վստահ ելույթ ունեցավ Սամվել Գրիգորյանը, որը երկամարտի 333 կգ (149+184) արդյունքով գրավեց 2-րդ տեղը:

27-ամյա Սամվել Գրիգորյանը, որը 14 մասնակիցներից ամենաստարեցն էր, պոկում վարժության 3 մոտեցումներն էլ հաջող կատարեց: Նա հաջողաբար գլխավերեւում պահեց 143, 147 եւ 149 կգ-անոց ծանրաձողերը: Այս վարժությունում հայ ծանրորդը նվաճեց փոքր արծաթե մեդալ: Սամվելին կարողացավ գերազանցել միայն ռուսաստանցի Դմիտրի Խոմյակովը: Նա պոկում վարժությունը սկսեց 150 կգ-ից, ապա բարձրացրեց 155 կգ, որը բավարար էր ոսկե մեդալին արժանանալու համար: 3-րդ մոտեցմամբ նա փորձեց ավելի մեծացնել առավելությունը մրցակիցների նկատմամբ, սակայն 160 կգ ծանրությունը նրան չենթարկվեց:


ՖՈՏՈԼՈՒՐ

Հրում վարժությունում 2 ծանրորդներն էլ սկսեցին 178 կգ-ից: Սամվելը միայն 2-րդ մոտեցմամբ հաղթահարեց ծանրությունը, իսկ Խոմյակովը հաջող իրականացրեց առաջին փորձը: 3-րդ մոտեցմամբ հայ ծանրորդը բարձրացրեց 184 կգ, իսկ ահա Խոմյակովը չկարողացավ հաղթահարել 185 կգ-ը: Սամվելը հրում վարժությունում արժանացավ ոսկե մեդալի՝ ապահովելով երկամարտում արծաթե պարգեւը: Իսկ չեմպիոն հռչակվեց Դմիտրի Խոմյակովը երկամարտի 338 կգ (155+183) արդյունքով: Բրոնզե մեդալը բաժին հասավ մոլդովացի Դմիտրի Կապտարին՝ 328 կգ (145+183):

## «Չելսին» պարտվեց «Շախտյորին»

Չեմպիոնների լիգայի մրցաշարում Դոնեցկի «Շախտյորին» այս անգամ էլ չհաջողվեց խախտել տխուր ավանդույթը ու հաղթել Անգլիայում: Մառախլապատ Ալբիոնում անցկացրած 4 հանդիպումներից 3-ում «Շախտյորը» պարտվել է, մեկն ավարտել է ոչ-ոքի: Ընդ որում թիմի մրցակիցները մշտապես լոնդոնյան ակումբներն են եղել:



Իսկ ահա Լոնդոնի «Չելսին» շատ հաջող է հանդես գալիս սեփական հարկի տակ եւ «Շախտյորի» հետ խաղում էլ մարզական բախտը չեմպիոնների ներկայիս գավաթակրի կողմն էր: Արդեն 9 տարի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարերում «Չելսին» սեփական հարկի տակ չի պարտվել: Հետաքրքրական է, որ վերջին անգամ խմբային մրցաշարում «Չելսիին» հաղթել էր թուրքական «Բեշիքթաշը», որին մարզում էր «Շախտյորի» ներկայիս գլխավոր մարզիչ Միրչա Լուչեսկուն:

2-3 հաշվով կրած պարտության մեջ «Շախտյորի» ֆուտբոլիստներն առաջին հերթին պետք է իրենց մեղադրեն: Նախ, շատ անվստահ գործեց թիմի դարպասապահ Անդրեյ Պյատովը, որի անփույթ խաղի պատճառով մրցակիցը դեռեւս 1-ին խաղակեսում 2 անգամ հասավ հաջողության: 2 անգամ վերականգնելով հավասարակշռությունը, «Շախտյորը» հետագայում սկսեց գնդակ պահել, ժամանակ ձգել՝ բացահայտորեն հասկացնելով, որ ոչ-ոքին թիմին լիովին ձեռնտու է: Իսկ եթե հյուրերը մի փոքր արագ գործեին ու խնամքով օգտագործեին պահերը, իրենք կարող էին հաղթանակած հեռանալ խաղադաշտից: «Շախտյորին» խաղավերջում կարող էր հաղթանակ պարգեւել Հենրիխ Մխիթարյանը, սակայն նրա հարվածն իր վրա ընդունեց «Չելսիի» պաշտպանը: Իսկ պասիվ խաղի հատուցումը չուշացավ: Վիկտոր Մոզեսը ավելացված ժամանակում պատժեց «Շախտյորին»:

Թիմերի մարզիչների կարծիքը հետեւյալն էր:

**Ռոբերտո Դի Մատեո** («Չելսի») - Դժվարին խաղ էր: «Շախտյորն» ապացուցեց, որ շատ լուրջ թիմ է: Գուցե մեր բախտը բերեց խաղավերջում, սակայն ընդհանուր առմամբ մենք հաղթանակին արժանի էինք: Թերեւս մեզ մի փոքր չբավականացրեց մրցակցային փորձը, քանի որ թիմի կազմից բացակայում էին Ֆրենկ Լեմփարդը, Էշլի Քոուլը, Ջոն Թերին, որոնք չեմպիոնների լիգայի հանդիպումների զգալի փորձ ունեն: Սակայն կարծում եմ, որ մեր ֆուտբոլիստներն իրենց գերազանց դրսեւորեցին եւ արժանի են գովեստի: Այս հաղթանակը զգալիորեն մեծացնում է հաջորդ փուլ մտնելու մեր հնարավորությունները:

**Միրչա Լուչեսկու** («Շախտյոր») - Սա շատ ցավագին պարտություն էր, հաշվի առնելով, որ խաղի ընթացքում զգալի առավելություն ունեինք: Մենք գոլային մի շարք պահեր ստեղծեցինք, սակայն չկարողացանք հաջողության հասնել: Ցավոք, այսօր Անդրեյ Պյատովի օրը չէր, նա կարող էր ավելի ուշադիր գործել: Այդ դեպքում գնդակը 2 անգամ չէր հայտնվի նրա դարպասում: Հարկավոր է ուշադրությունը պահպանել մինչեւ խաղավերջ, ինչը մեր ֆուտբոլիստների մոտ չստացվեց: Չնայած թույլ տված սխալներին, բավականություն ստացա մեր խաղից: «Շախտյորը» մեկ անգամ եւս ապացուցեց, որ Եվրոպայի լավագույն ակումբների թվին է պատկանում:

E խմբում մրցաշարային իրավիճակը բավականին սրվեց: «Շախտյորն» ու «Չելսին» 7-ական միավորով առաջատարներն են: «Յուվենտուսը» 4-0 հաշվով ջախջախելով «Նորդշելանդին», ունի 6 միավոր:

Իր երկրպագուներին հաճելի անակնկալ մատուցեց շոտլանդական «Սելթիկը»՝ սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթելով «Բարսելոնին»: Ընդ որում միակ գոլը Մեսին խփեց ավելացված ժամանակում:

G խմբի մյուս խաղում «Բենֆիկան» Լիսաբոնում 2-0 հաշվով պարտության մատնեց Մոսկվայի «Սպարտակին»: «Բարսելոնը» 9 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: 7 միավոր ունի «Սելթիկը»:

«Մանչեսթր Յունայթեդը» ժամկետից շուտ նվաճեց հաջորդ փուլի ուղեգիրը՝ 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով «Բրագայի» նկատմամբ (3-1): H խմբի մյուս ուղեգրի համար պայքարում են 3 թիմեր: 4-ական միավոր ունեն «Գալաթասարայն» ու ՉՖՌ-ն, որոնց մրցավեճում 3-1 հաշվով հաղթեց թուրքական թիմը:

F խմբում Մյունխենի «Բավարիան» եւ իսպանական «Վալենսիան» 9-ական միավորով առաջատարներն են: «Բավարիան» Մյունխենում 6-1 հաշվով ջախջախեց «Լիլին», իսկ «Վալենսիան» հաղթեց ԲԱՏԷ-ին (4-2): Վերջինս 6 միավոր ունի եւ դեռեւս կարող է պայքարել ուղեգրերի համար:

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ՇՈՒԿԱ

## «Բավարիան» հետաքրքրվում է Հենրիխ Մխիթարյանով

**Շվեյցարական Fussball.ch կայքի տեղեկացմամբ Մյունխենի «Բավարիան» հետաքրքրվել է Հենրիխ Մխիթարյանի ծառայություններով: Ըստ կայքի, «Բավարիան» 15 մլն եվրո է առաջարկել Հենրիխի դիմաց, սակայն «Շախտյորը» մերժել է: Ուկրաինական ակումբը պատրաստվում է մինչեւ 2018-ը նոր պայմանագիր կնքել հայ ֆուտբոլիստի հետ:**

**Նշենք, որ Հենրիխով հետաքրքրվում է նաեւ Թուրինի «Յուվենտուսը»: Ավելի վաղ Սանկտ Պետերբուրգի «Զենիթն» էր ցանկանում իր կազմում ընդգրկել Մխիթարյանին:**

**Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հարցում է անցկացրել՝ որոշելու տարբեր աշխարհամասերի ամենամեծ հեղինակություն վայելող ֆուտբոլիստներին: Այդ հարցման արդյունքներով Եվրոպայում 1-ին տեղում Հենրիխ Մխիթարյանն է, որի օգտին քվեարկել են 50.310 ֆուտբոլասերներ: Ինչ խոսք, այդ քվեարկությունում հայկական գործոնը մեծ դեր է խաղացել: 2-րդ տեղում «Մանչեսթր Սիթիի» բոսնիացի ֆուտբոլիստ Էդին Ջեկոն է, որին 30.603 ձայն է տրվել: Լավագույնների եռյակը եզրափակում է «Լացիոյի» ալբանացի ֆուտբոլիստ Լորիկ Կանան (13.975 ձայն): Հետաքրքրական է, որ Քրիշտիանու Ռոնալդուն այդ ցանկում միայն 5-րդն է (7.749 ձայն): Իսկ լավագույն տասնյակը եզրափակում է Իկեր Կասիլյասը (2.349 ձայն):**

## Ֆուտբոլի ՀՀ գավաթի խաղարկության ցանկը հայտնի է

**Երեկ ֆուտբոլի ֆեդերացիայում կայացավ 2012-2013-ի Հայաստանի գավաթի խաղարկության վիճակահանությունը: Մրցաշարին մասնակցում են բարձրագույն խմբի 8 թիմեր, ինչպես նաեւ առաջին խմբի ներկայացուցիչ Մարտունու «Ալաշկերտը»: Մրցակարգի համաձայն «Ալաշկերտը» 1/8 եզրափակիչում կմրցի նոյեմբերի 8-ի դրությամբ ՀՀ բարձրագույն խմբի առաջնության աղյուսակը եզրափակող «Բանանցի» հետ: Առաջին հանդիպումը կկայանա նոյեմբերի 14-ին «Բանանցի» մարզադաշտում: Նոյեմբերի 28-ին «Ալաշկերտը» սեփական հարկի տակ կհյուրընկալի «Բանանցին»:**

**Վիճակահանությամբ հայտնի դարձավ, որ 1/8 եզրափակիչի զույգի հաղթողը քառորդ եզրափակիչում մրցելու է Կապանի «Գանձասարի» հետ: Առաջին խաղը կկայանա 2013-ի մարտի 3-ին «Ալաշկերտ»-«Բանանց» զույգի հաղթողի խաղադաշտում:**

**Քառորդ եզրափակիչի մյուս զույգերը կազմել են «Ուլիսն» ու «Միկան», «Շիրակն» ու «Արարատը», որոնց հաղթողները կիսաեզրափակիչում մրցելու են միմյանց հետ: «Փյունիկը» քառորդ եզրափակիչի առաջին խաղում կհյուրընկալի «Իմպուլսին»: Այս զույգի հաղթողը կիսաեզրափակիչում կմրցի «Գանձասարի» եւ «Ալաշկերտ»-«Բանանց» մրցավեճում հաջողության հասած թիմի մրցավեճի հաղթողի հետ: Կիսաեզրափակիչ առաջին հանդիպումները նախատեսված են ապրիլի 2-3-ին, պատասխան խաղերը՝ ապրիլի 16-17-ին: Գավաթի նոր տերը հայտնի կդառնա 2013-ի մայիսի 8-ին «Հանրապետական» մարզադաշտում կայանալիք եզրափակիչ մրցախաղում:**

**Մրցակարգի համաձայն, եթե 1/8 եզրափակիչին մասնակցած ֆուտբոլիստները 2013-ի փետրվարին այլ թիմ տեղափոխվեն, ապա նրանց կթույլատրվի նոր թիմի կազմում շարունակելու ելույթները գավաթի մրցաշարում:**

## «Լինեքս Մաջիքն» առաջատարների խմբում է

**Շախմատի Իսպանիայի ակումբային առաջնության 3-րդ տուրում «Լինեքս Մաջիքը» 3,5-2,5 հաշվով պարտության մատնեց «Ռեուերտե Ալբոքսին»: Գաբրիել Սարգսյանը հաշտություն կնքեց Ալեքսանդր Շիմանովի հետ, իսկ Սամվել Տեր-Սահակյանը պարտվեց Ալեքսեյ Գոգանովին: Թիմի հաղթանակն ապահովեցին Իվան Չեպարինովը, Դմիտրի Սվետուշկինն ու Խոսե Գարսիա Մենդեզը, որոնք պարտության մատնեցին մրցակիցներին:**

**3 տուրից հետո «Լինեքս Մաջիքը» 4 միավորով ընթանում է 3-րդ տեղում: Նույնքան միավոր ունի նաեւ «Գրոս Խակե-Տալդեան», որը «Լինեքս Մաջիքին» գերազանցում է ընդհանուր պարտիաներում վաստակած միավորներով: Իսկ առաջատարը «Սեստաո Նատուրգասն» է, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց:**

## Ռոջեր Ֆեդերերի յուրօրինակ ռեկորդը

Լոնդոնում ընթացող 8 ուժեղագույն թենիսիստների մրցաշարում սերբ Նովակ Ջոկովիչը 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Նրա մրցակիցը բրիտանացի Էնդի Մարեյն էր: 2 թենիսիստներն էլ մեկնարկում հաղթել էին եւ նրանց մրցավեճի ելքը կարեւոր նշանակություն ուներ հետագա պայքարում:

Լոնդոնում 2 մրցակիցները 16-րդ անգամ հանդիպեցին: Մինչ այդ Շանհայում հաղթել էր Ջոկովիչը, իսկ ԱՄՆ-ի բաց առաջնությունում Մարեյը պարզապես ջախջախել էր մրցակցին եզրափակիչում՝ մարզական իր կարիերայում առաջին անգամ հաղթող ճանաչվելով «Մեծ սաղավարտի» մրցաշարում:

Լոնդոնում առաջին խաղափուլն ավարտվեց Մարեյի հաղթանակով (6-4), իսկ հաջորդ 2 խաղափուլերում հաջողությունն ուղեկցեց Ջոկովիչին (6-3, 7-5):

A խմբի մյուս խաղում չեխ Թոմաշ Բերդիխը 3 խաղափուլում առավելության հասավ ֆրանսիացի Ժո-Վիլֆրիդ Տսոնգայի նկատմամբ (7-5, 3-6, 6-1):

B խմբում հաղթանակով մեկնարկեց շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը, որը բավականին հեշտությամբ հաղթեց սերբ Յանկո Տիպսարեւիչին (6-3,6-1): Աշխարհի ոչ պաշտոնական առաջնություններում այդ հաղթանակը 40-րդն էր Ֆեդերերի համար: Ֆեդերերը գերազանցեց Էնդի Մարեյի ներկայիս մարզիչ, նախկինում չեխ հանրահայտ թենիսիստ Իվան Լենդլի ռեկորդը, որը նման մրցաշարերում 39 հաղթանակ էր տոնել:

Խմբի մյուս խաղում իսպանացի Դավիթ Ֆեռերը պարտության մատնեց արգենտինացի Խուան Մարտին դել Պոտրոյին (6-3, 3-6, 6-4): Ֆեռերն ընթացիկ մրցաշրջանում բոլորից շատ՝ 7 մրցաշար է շահել, յուրօրինակ ռեկորդակիր է անցկացրած հանդիպումների (86) եւ տոնած հաղթանակների (72) քանակով:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Թուրքիան Էրզրում է իջեցրել Երեւան-Հալեպ չվերթի հայկական եւս մեկ ինքնաթիռ

*1-ին էջից*

Այս արարքը պայմանավորված է Սիրիայի նկատմամբ Թուրքիայի որդեգրած չարանենգ քաղաքականությամբ, դրա ձախողումից բխող հետքայլը քողարկելու նկրտումներով, հայատյացության դրսեւորումներով եւ այդ դրսեւորումների ուժի մեջ գտնվելը թուրք ժողովուրդ կոչված ոհմակին ժամանակ առ ժամանակ հիշեցնելու անհրաժեշտությամբ:

Ինչ վերաբերում է «Գող՝ սիրտը դող» ասացվածքին, ապա Թուրքիայի պարագայում դրա ճշմարտացիության վկայությունը Եմենի պաշտպանության նախարարության նոյեմբերի 5-ի հայտարարությունն է: Այստեղ, ըստ «Ինտերհաբեր» կայքէջի, ծանր մեղադրանք է ներկայացվում Անկարային:

Թուրքական կայքէջը վկայակոչում է Եմենի SABA լրատվական գործակալությանը, որի համաձայն՝ հոկտեմբերի 4-ին «Ազատ առեւտրի գոտի» հայտարարված Ադենի նավահանգստում Եմենի մաքսային ծառայությունները կասկածում եւ խուզարկում են մասնավոր թուրքական ընկերությանը պատկանող, Թուրքիայից ժամանած առեւտրանավը: Խուզարկմամբ հայտնաբերվում է թխվածքաբլիթի կոնտեյների մեջ խնամքով տեղադրված 384 բեռնարկղ, բեռնարկղերի մեջ էլ՝ 3000 ինքնաձիգ ատրճանակ եւ հրացան՝ խլացուցիչներով հանդերձ, ինչպես նաեւ համապատասխան փամփուշտ:

Եմենի մաքսային ծառայությունները առգրավում են զենքը, կալանում թուրքական նավը, իսկ երկրի արտգործնախարարությունը հայտարարում է, որ այդ զենքը Թուրքիայից ուղարկվել է Եմենի անվտանգությանն ու կայունությանը վնասելու նկատառումներով: Թեեւ Թուրքիայի արտգործնախարարությունը չի հերքել, սակայն, դիմել է Սաուդյան Արաբիային՝ խնդրելով ճնշում գործադրել Եմենի իշխանությունների վրա, որ վերջիններս չհրապարակեն Թուրքիայից ուղարկված զենքի հասցեատիրոջ անունը:

Oda TV-ն նշել է, որ թխվածքաբլիթի արկղերի մեջ Թուրքիայից Ադեն ուղարկված 3000 ինքնաձիգ ատրճանակն ու հրացանը նախատեսված էին Եմենի ընդդիմության ղեկավարներին ահաբեկելու համար: Առանց դրա էլ ակնհայտ է, որ զինվորները ռազմադաշտում խլացուցչի կարիքը չունեն, դա միմիայն օգտագործվում է ահաբեկչական նպատակներով վարձու մարդասպանների եւ ահաբեկիչների կողմից:

Հատկանշական է, որ Եմենում ընդդիմության ղեկավարներին ահաբեկելու թուրքական նկրտումները նոր չեն, ոչ էլ թխվածքաբլիթի քողի տակ այլ երկիր զենք ուղարկելը: Այս նպատակով Թուրքիան 2011-ի մարտին, ինչպես այս տարվա նոյեմբերի 7-ի համարում նշել է «Ենի մեսաժը», Հյուսիսային Եմեն էր ուղարկել 16 հազար ատրճանակ: Այս ատրճանակները հասել էին մինչեւ Եգիպտոս, որտեղից էլ Միացյալ Արաբական Էմիրություններ, եւ տեղում ոստիկանությունը հայտնաբերել ու առգրավել էր:

2011-ի նոյեմբերին Թուրքիայից ուղարկված զենք էր հայտնաբերվել նաեւ Սիրիայում: Ավելին, իսլամական երկրներ՝ մասնավորապես Եմեն, գաղտնի ճանապարհով զենք առաքելու մասին Թուրքիայի ազգային մեծ ժողովում հարցապնդում է արել Ժողովրդահանրապետական կուսակցության պատգամավոր Ալի Օզգյունդուզը, ակնկալելով արտգործնախարար Դավութօղլուի պատասխանը:

Թուրքիայի արտգործնախարարը ինչպես կվարվի՝ ցույց կտա ժամանակը: Բայց որ զենքի առաքումների համաձայնեցումը Ամերիկյան կենտրոնական հետախուզական վարչության հետ եւ դրա բարձրաձայնումը Մեջլիսում, հայկական ասացվածքի ճշմարտացիությունը Թուրքիայի առնչությամբ հաստատելիս, միաժամանակ իսլամական երկրներին համոզում են տարածաշրջանային մեծ տերություն Թուրքիայի տարածաշրջանի համար մեծ չարիք լինելու պարագան, ակնհայտ է:

Ինքնաթիռ խուզարկելը չի փրկի դրությունը, իզուր չեն ասել. «Գող՝ սիրտը դող»:

***Խմբ. կողմից.*** *- Տեղեկացնենք, որ երեկոյան արդեն հայկական ինքնաթիռին թույլատրվել էր թռիչքը շարունակել Էրզրումից Հալեպ եւ բեռները բարեհաջող տեղ էին հասել:*

# Հայտնաբերվել է Երկրին նման մոլորակ

Մարդկության համար նոր տուն՝ Տիեզերքում իր դիրքով Երկրին համանման մոլորակ են հայտնաբերել Անգլիայի եւ Գերմանիայի համալսարանների մի խումբ աստղագետներ, հաղորդում է «Արմենպրես»-ը՝ հղում անելով Բի բի սի հեռուստառադիոհաղորդումների կորպորացիային:

«Լինելով Երկրագնդից 44 լուսային տարի հեռավորության վրա՝ մոլորակը գտնվում է այսպես կոչված «բնակելի գոտում» (Goldilocks Zone), ինչը նշանակում է, որ այն կարող է կենսաբանական կյանքը պահպանել իր մարդկային տարբերակով»,- ընդգծում է Բի Բի Սին:

Հայտնաբերված մոլորակը, որն ստացել է HD40307 մակնշումը, արեգակից գտնվում է այնպիսի հեռավորության վրա, որը համեմատելի է այն հեռավորության հետ, որը մեր համակարգում բաժանում է Երկիրը եւ Արեգակը: Այս ցուցանիշը հանգուցային է նրանց համար, ովքեր այլընտրական տուն են փնտրում մարդկային քաղաքակրթության համար, քանի որ միատեսակ է ստացվող էներգիայի ծավալը:

«Մեր հայտնաբերած մոլորակը ոչ մեծ եւ բավականաչափ հին աստղ է, ոչ մի պատճառ չկա կասկածելու, որ այնտեղ գոյություն ունի երկրայինին համանման կլիմա»,- ընդգծել է աշխատանքների մասնակիցներից մեկը՝ **Գիլեմ Անգլա Էսկուդեն** Գերմանիայի Գյոտինգենի համալսարանից:

Մարդկության համար նոր տունն ավելի ընդարձակ է. HD40307-ի զանգվածը գրեթե յոթ անգամ գերազանցում է Երկրի զանգվածին:

## ՑԱՆԿ

**ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության ծրագրի «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» բաղադրիչի շրջանակներում 2012թ. հունիսի 1-ին ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի եւ Արարատի մարզերում հայտարարված 3-րդ փուլի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ծրագրերի**

| N | Գրանցման N | Ծրագրի անվանումը | Մարզ, համայնք | Հայտատուի անուն, ազգանուն | Ծառայություն մատուցողի անուն, ազգանուն | Ծրագրի տեւողությունը (ամիս) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2/3 | Նորագույն, առաջավոր տեխնոլոգիաներով կարտոֆիլի մշակման (մաքրման, լվացման, տեսակավորման, չափարկման, տարայավորման եւ փաթեթավորման) կենտրոնի հիմնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում: | ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մեծ Մասրիկ համայնք | Արամ Խլղյան | Սարգիս Բաղուրյան | 24 |
| 2 | 3/3 | Նոր «Վիետնամական» ցեղի խոզերի ներմուծում, գենոֆոնդի բարելավում եւ տարածում Հայաստանի Հանրապետությունում: | ՀՀ Արարատի մարզ, ք.Արարատ | Սամվել Բարսեղյան | Արմեն Շախբազյան | 24 |
| 3 | 7/3 | Կերակրման եւ պահվածքի նոր տեխնոլոգիաների կիրառմամբ աֆրիկյան ջայլամների վերարտադրության կազմակերպում ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում: | ՀՀ Արմավիրի մարզ, Ջրառատ համայնք | Տիգրան Խաչատրյան | Լյովա Ալեքսանյան | 24 |
| 4 | 11/3 | Նոր, բարձրարժեք պտղատեսակի (պիստակենու) տնկարանի հիմնում եւ տնկիների արտադրության կազմակերպում: | ՀՀ Տավուշի մարզ, Պտղավան համայնք | Սպարտակ Զախարյան | Արա Հարությունյան | 24 |
| 5 | 14/3 | Նոր տեխնոլոգիայի հիման վրա պատրաստված փոքր արտադրական հոսքագծի միջոցով ասեպտիկ եղանակով պահեստավորված մածուկներից (ծիրանի, դեղձի, լոլիկի եւ այլն) փաթեթավորման նոր եղանակով դեռեւս նման նպատակների համար չկիրառված պոլիպրոպիլենային տարաներում նոր արտադրանքի արտադրության կազմակերպում: | ՀՀ Արմավիրի մարզ, Ոսկեհատ համայնք | Արմեն Ալեքսանյան | Լյովա Ալեքսանյան | 24 |
| 6 | 17/3 | Հայաստանի Հանրապետություն ներթափանցած կարանտինային վնասատու՝ արեւմտյան ծաղկային կամ կալիֆորնիական թրիպսի, կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրումը եւ հիմնավորված պայքարի համալիր միջոցառումների մշակումը դրա դեմ ջերմատնային պայմաններում: | ՀՀ Արարատի մարզ, Ոսկետափ համայնք | Ռազմիկ Մարտիրոսյան | Արմենակ Տեր-Գրիգորյան | 24 |
| 7 | 27/3 | ՀՀ Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքում կարճ շրջապտույտով արագաճ բարդիների նոր սորտերի տնկարանային տնտեսության հիմնում ֆիտոմելիորացիվ նոր տեխնոլոգիայի կիրառմամբ: | ՀՀ Արմավիրի մարզ, Վարդանաշեն համայնք | Սուրեն Բաբաջանյան | Գագիկ Մովսիսյան | 24 |

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
### Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ -7/12

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի տանիքի հակասառեցման համակարգի աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի տանիքի հակասառեցման համակարգի աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ **WWW.gnumner.am** էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 16.11.2012 թվականի ժամը 1100(ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային




w w w . a z g . a m

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
### Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ ՊԸԾՁԲ -03/12

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ՝ երկու առանձին չափաբաժիններով:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող՝ ՀՀ Վերաքննիչ քրեական և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանների վարչական շենքերի գազի կարգավորիչների փոխարինման ծառայությունների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ **WWW.gnumner.am** էլեկտրոնային հասցեով, **azdarar.am** էլեկտրոնային հասցեով կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև սույն թվականի 17.11.2012 թվականի ժամը 1200:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Շմիդտի փողոց h.5 | Բնակելի տուն | 86.2 | 13.3 | 16,270,000.0 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ նոյեմբերի 23-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ նոյեմբերի 23-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 8.11.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: